

## Գլխավոր Զիւպատու Արմէն Բայբուրդեանի Ուղերձը՝ Հայաստանի Անկախութեան տօնին Առթիւ

Սիրելի հայրենակիցներ, շատ սիրելի եւ յարգելի կալիֆորնիա-հայեր,

Սրտանց շնորհաւորում եմ բուրիղ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տօնի առթիւ: Այս սրբազնագոյն օրուայ կապակցութեամբ ես շնորհաւորում եմ Կալիֆորնիայում հաստատուած իւրաքանչիւր հայ ընտանիքի, ամէն հայի անձնապէս, նաեւ այն ամերիկացիներին, ովքեր իրենց նպաստն են բերել մեր հայրենիքին:

Հպարտանում եմ ձեզանով, հրաշալի գիտակցելով, որ դուք մեր հայրենեաց ջահակիրներն էք, մշտապէս կրում էք մեր սուրբ երկրի ոգին ձեր մտքում եւ սրտում: Երբ 1991 թուականի Սեպտեմբերի 21-ին մեր հայ ժողովուրդն իր հաւաքական անկոտորում կամքը դրսեւորեց եւ, ի շարունակումն 1918 թուականին հիմք դրուած մեր անկախ պետականութեան, որոշեց իրաւական գետնի վրայ կերտել ինքնիշխան ժամանակակից պետութիւն, ձեզանից իւրաքանչիւրն իր անմիջական մասնակցութիւնն է բերել մեր ազգային իղձերի իրականացմանը: Ես նկատի ունեմ ոչ միայն նրանց, ովքեր իրենց վճռական քուէով են դրսեւորել ժողովրդի կամքը հենց Հայաստանում այդ Սեպտեմբերի 21-յան պանծալի օրը, այլեւ նրանց, ովքեր, սերունդներով փայփայել են այդ երազանքը ու հայրենիքից հեռու գտնուող Կալիֆորնիայում հոգով ու սրտով մաս կազմել այդ պատմական որոշմանն ու գործընթացին: Աշխարհագրութիւնը պարզապէս չէր կարող մեզ բաժանել:

Մեր ազգն անչափ հպարտանում է իր այն զաւակներով, ովքեր գործնականում են նպաստել հայոց պետականութեան կայացմանը անկախութեանը յաջորդած տարիներին: Այս օրն այն օրն է, երբ տօնելու հետ մէկտեղ, մենք պէտք է անսահ-

Շար.ը էջ 5

## Նախագահ Սաքրոն Փաշինեանը Ընդունեց Էլիզաբեթ Պալատէն Ներսի

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխավորած կառավարական պատուիրակութիւնը աշխատանքային այցելութեամբ անցեալ շաբաթ ժամանեց Ֆրանսայի Հանրապետութիւն:

Նախագահ Էմանուէլ Մաքրոնն էլիզաբեթ Պալատէն Ներսի ընթացքում Հայաստանի վարչապետը, որու հետ քննարկուած են Ֆրանսոֆոնիայի զագաթնաժողովին եւ անոր շրջագիծէն ներս առաջին անգամ կազմակերպուելիք պիզնես ֆորումին վերաբերող հարցեր: Անդրադարձ մեղած է նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան: Հայաստանի վարչապետն ու Ֆրանսայի նախագահը կարեւորած են խնդրի խաղող կարգաւորումը՝ ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահութեան ջանքերով: Կողմերը համաձայնած են հայ-ֆրանսական յարաբերութիւնները ամբողջ ծաւալով քննարկել Հոկտեմբերին: Երեւանի մէջ տեղի ունենալիք



Նախագահ Էմանուէլ Մաքրոնն եւ վարչապետ Նիկոլ Փաշինեան Էլիզաբեթ Պալատի մուտքին

Ֆրանսոֆոնիայի զագաթնաժողովի շրջագիծէն ներս Էմանուէլ Մաքրոնը պիտի գայ Հայաստան եւ այդ միաժամանակ պիտի կատարուի նաեւ Ֆրանսայի նախագահի պե-

տական այցը Հայաստան: Վարչապետ Փաշինեանը նաեւ այցելած է Փարիզի քաղաքապետա-

Շար.ը էջ 5

## Քոչարեան Վարձած է Հասարակութեան Հետ Կապերու Արեւմտեան Ընկերութիւն

Հետաքննող Լրագրող Գրիգոր Աթանէսեանի հրապարակած տեղեկութիւններուն համաձայն, Հայաստանի նախագահի պաշտօնը վարած Ռոպերթ Քոչարեան կը փորձէ իր նկատմամբ դրական կարծիք ձեւաւորել Արեւմուտքի մէջ, միաժամանակ ժխտական տեղեկութիւններ տարածելով վարչապետ Նիկոլ Փաշինեանի մասին:

Այս նպատակաւ, Քոչարեանի փաստաբանները վարձած են Բրիտանացի լրագրատ Մայքլը Պուրրելը, որ կ'աշխատի որպէս միջազգային խորհրդատու Eurasia Advisory-ի հասարակական կապերու (Public relations) ընկերութեան հետ: Ան նախապէս կը գործէր APCO ընկերութեան հետ, երբ այդ ընկերութիւնը կը ներկայացնէր «Ատրպէյճանի Բարեկամներ» կազմակերպութիւնը: «Ատրպէյճանի Բարեկամներ»-ը Միացեալ Նահանգ-

ներու մէջ արձանագրուած է որպէս ոչ հասութաբեր կազմակերպութիւն եւ կը ֆինանսաւորուի Ատրպէյճանական քարիւղի SOCAR ընկերութեան կողմէ:

Ըստ Աթանէսեանի հրապարակած տեղեկութիւններուն, Մայքլը Պուրրելը պատրաստած է երկու գրութիւններ, ուր Քոչարեանը կը ներկայացուի որպէս ընտրովի հետապնդումներու զոհ:

Այս երկու գրութիւնները ուղարկուած են Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնին՝ Փաշինեանի հետ անոր ունեցած հանդիպումէն առաջ: Մայքլը Պուրրելը Ֆրանսայի նախագահէն կը պահանջէ, որ Փաշինեանի հետ բարձրացնէ Քոչարեանի դէմ եղած մեղադրանքներու հարցը:

Մայքլը Պուրրելը իր գրու-

Շար.ը էջ 6

## Վարչապետ Նիկոլ Փաշինեան Հանդիպում Պիտի Ունենայ Ամերիկահայութեան Հետ

Այս շաբաթավերջին Միացեալ Նահանգներ պիտի ժամանէ վարչապետ Նիկոլ Փաշինեան, Նիւ Եորքի մէջ մասնակցելու Միացեալ Ազգերու կազմակերպութեան տարեկան ընդհանուր ժողովի եւ ելոյթ պիտի ունենայ Հայաստանի անունով:

Այս առթիւ Փաշինեան պիտի ունենայ շարք մը հանդիպումներ:

Նախատեսուած է նաեւ վարչապետի հանդիպումը Ամերիկահայ կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ, որ տեղի պիտի ունենայ Կիրակի, Սեպտեմբեր 23-ի երեկոյան Նիւ Եորքի մէջ:

Վարչապետը պիտի այցելէ նաեւ Նիւ Եորքի «Մեթրոփոլիթըն» թանգարանէն ներս տեղի ունենալիք Հայաստանին նուիրուած ցուցահանդէսը:



### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ

## ARMENIAN INDEPENDENCE DAY

# SUNDAY, SEPTEMBER 23-2018

### VERDUGO PARK GLENDALE

1621 Canada Blvd., Glendale, CA, 91206  
Starting at 11:00 am

# Փառանքի Փառանքի

## FESTIVAL

GENERAL SPONSOR

**INNOVATIVE**

Designs Manufacturing, Inc.

By TED & NORA KOROGHLIAN

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ ԱՐՈՒԵՍԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՒ ԳԻՐԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ ՓՈՐՔԵՐՈՒ ԽԱՂԵՐ - ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ



# ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## Գաղտնալսման քննութիւնը՝ Քոչարեանի «Յետքի» Վրայ

ՍԱՐԳԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀՀ ոստիկանութեան 6-րդ վարչութեան եւ Քննչական կոմիտէի աշխատակիցներն խուզարկութիւն են անցկացրել Yerevan.today կայքի խմբագրութիւնում:

Խուզարկութիւնը կապուած է սկանդալային գաղտնալսման հետ: Այն հանգամանքը, որ խուզարկութիւնների շղթան մեկնարկել է Yerevan.today կայքից՝ յուշում է, որ նախաքննութեան մարմինը հիմնական է համարում վարկածը, որ ԱԱԾ տնօրէն Արթուր Վանեցեանի ու ՀԲԾ պետ Սասուն Խաչատրեանի հեռախօսազրոյցի գաղտնալսման հետեւում կանգնած են Ռոբերտ Քոչարեանն ու նրա շրջապատը: Յամենայն դէպս՝ Yerevan.today կայքը կապուած է Ռոբերտ Քոչարեանի անուան հետ, ու վերջին շրջանում երկրորդ նախագահի, այսպէս կոչուած, բացառիկ հարցազրոյցները թողարկվում են հենց այս տեղեկատուական հարթակում:

Հայաստանի իշխանութեան առաջին դէմքերն ու հասարակութեան մեծամասնութիւնը նոյնպէս կարծում են, որ գաղտնալսման հետքերը տանում են Ռոբերտ Քոչարեանի ուղղութեամբ: Սակայն անկախ հանրային ու քաղաքական տրամադրութիւններից՝ իրաւապահները պէտք է ունենան կոնկրետ փաստեր, հակառակ պարագայում՝ խուզարկութիւնները կարող են այլ գնահատականների տեղիք տալ՝ ընդհուպ մեկնաբանուել, որ իշխանութիւններն ոտնձգութիւն

են կատարում ազատ խօսքի դէմ կամ լուեցնում են Ռոբերտ Քոչարեանի ձայնը՝ խոչընդոտելով փաստացի նրա թիմի վերահսկողութեան տակ գտնուող լրատուամիջոցի գործունեութիւնը:

Արդեօ՞ք քննչական մարմիններն արդէն ունեն կոնկրետ փաստեր, թէ՞ զնացել են համընդհանուր տարածում գտած վարկածի իրաւական ամրագրման ուղղութեամբ փաստեր հաւաքելու: Այն վարկածը, թէ առաջինն այդ գաղտնալսման տեսագրութիւնը տպագրել են Yerevan.today-ը եւ hrparak.am-ը՝ անշուշտ, ենթակա է ստուգման, սակայն, թերեւս, արդկոտ խուզարկութիւնը դրա լաւագոյն միջոցը չէ:

«Ոստիկանութիւնն է յայտնել, որ իրենց տեղեկութիւններով՝ ԱԱԾ տնօրէնի ու ՀԲԾ պետի ձայնագրութիւնը շուտ է դրուել, կարող էր ստուգել ու պարզել, որ աւելի ուշ է դրուել, դա Google-ի խնդիր է, որովհետեւ նոյն կերպ երկու կառուցի ղեկավարի ասուլիսի մասին էլ տեղեկատուութեան հրապարակումն աւելի շուտ է ցոյց տալիս», - ասում է Yerevan.today-ի գլխավոր խմբագրի Սեւակ Յակոբեանը՝ ակնարկելով, թէ իրենց լրատուամիջոցը թիրախաւորուել է քաղաքական նպատակներով:

Քննչական կոմիտէն, իր հերթին, վստահեցնում է, որ խմբագրութիւնում կատարուող խուզարկութիւնը որեւէ կերպ առնչութիւն չունի իրականացուող լրագրողական գործունեութեան հետ, այլ բացառապէս ուղղուած է

ապահովելու քրէական գործով բազմակողմանի, օբիեկտիւ եւ լրիւ քննութիւնը, ստուգելու քրէական գործով ձեռք բերուած նախնական տուեալները, պարզելու երկու իրաւապահ մարմինների ղեկավարների հեռախօսազրոյցը գաղտնի ձայնագրելու եւ տարածելու եղանակը եւ հական նշանակութիւն ունեցող մի շարք հանգամանքներ: Այնուամենայնիւ, հետաքրքիր է՝ քննութիւնը ուսումնասիրում է միայն Քոչարեանի վարկածը, թէ՞ քննարկում է նաեւ օտարերկրեայ ծառայութիւնների կողմից գաղտնալսման կազմակերպման հնարաւորութիւնը, մանաւանդ որ Ռուսաստանը հարուստ փորձ ունի նման կեղտոտ տեխնոլոգիաներով միջամտել այլ երկրների քաղաքական ու ընտրական գործընթացներին:

Այս պահին պաշտօնական վարկածը կասկածի տակ դնելու հիմքեր չունենք, միւս կողմից՝ եթէ պարզուի, որ իրաւապահները սուրբ են տուել քաղաքական, հանրային սպասումներին ու դրսեւորել են աւելորդ շտապողականութիւն, ապա վտանգուելու է ոչ միայն կոնկրետ գործի նախաքննութիւնը, այլ նաեւ Հայաստանի իշխանութիւններն անհարկի մեղադրուելու են ժողովրդավարութիւնն ու ազատ խօսքը սահմանափակելու համար, մանաւանդ որ առաջիկայում ԵՆԽԿ մոնիթորինգի խմբում Հայաստանի հարցով նշանակուած են քննարկումներ: Այստեղ հարցն այն չէ, որ Քոչարեանն անմեղ է, մեծ հաւանականութեամբ՝ երկրորդ նախագահը՝ եթէ նոյնիսկ անմիջականօրէն

չի կազմակերպել գաղտնալսումը, ապա առնուազն տեղեկ է եղել դրա մասին: Ամբողջ խնդիրն այն է, որ այս փաստը իրաւապահները պէտք է հիմնաւորեն կոնկրետ փաստերով՝ առանց յուզականութեան ու էջֆորիկ տրամադրութիւնների, հակառակ դէպքում՝ միջազգային ատեաններում Հայաստանը կարող է կանգնել խնդիրների առաջ:

Միւս կողմից՝ անթոյլատրելի ենք համարում, որ Ռոբերտ Քոչարեանն ու նրա թիմը փորձում են քողարկուել ազատ մամուլի, ժողովրդավարութեան հետեւում: Եթէ Քոչարեանը՝ իր թալանած միլիարդներով, կարող է կայքեր գնել ու գբաղուել տեղեկատուական մանիպուլյացիայով կամ նոյնիսկ ահաբեկչութեամբ, ապա դա որեւէ կապ չունի ոչ լրատուական գործունեութեան եւ ոչ էլ՝ խօսքի ազատութեան հետ:

Նման դէպքերում յանցագործութեան բացայայտման անհրաժեշտութեան ու խօսքի ազատութեան պահպանման սահմանը շատ խոցելի է, որովհետեւ տարբեր, հաճախ՝ հակադիր գնահատականներ կարելի է տալ կատարուած խուզարկութիւններին: Եթէ դրանք, ի վերջոյ, եզրափակուեն պետութեան դէմ ուղղուած յանցագործութեան բացայայտմամբ, ապա խօսքի ազատութիւնը ոչ միայն վտանգուած չի լինի, այլ նոյնիսկ ավելի՛ն կը դադարի վահան լինել արիւնի մէջ թաթախուած Քոչարեանի համար: Հակառակ պարագայում՝ ստիպուած կը լինենք հերթական անգամ խօսել իրաւապահների դիլետանտիզմի մասին, ինչի հետեւանքով Նիկոլ Փաշինեանն արդէն մի քանի անգամ յայտնուել է անհարմար դրութեան մէջ:

Յուսանք, որ սա այդ դէպքը չէ: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

## Երդողանը Դժգոհել է Փաշինեանի Յայտարարութիւնից

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Թուրքիայի նախագահ Էրդողանը Պաքուից վերադարձին օդանավում պատասխանելով լրագրողների հարցերին, քննադատել է Միւսկի խմբի համանախագահներին, որ նրանք գործուն քայլեր չեն անում արցախեան հարցի կարգաւորման համար եւ ձգում են այն:

Էրդողանի յայտարարութիւնը յատկանշական է ու թերեւս արտացոլում է Ալիեւի բողոքը: Ատրպէյճանի նախագահն ըստ երեւոյթին տրտնջացել է Էրդողանին, որն էլ բարձրաձայնել է այդ տրտնջոցը: Իհարկէ, Ալիեւը ինքն էլ նոյն կերպ մի շարք անգամներ բողոքել է համանախագահներից, եւ այս դէպքում խնդիրը այն չէ, որ նա ամաչել կամ վախեցել է, թէ եւ օրինակ Միւսկի խմբի շէկ վթարից յետոյ Ալիեւը կարող է ունենալ շատ վախեր, երբ մի վթարը բաւական էր, որ Ատրպէյճանի կէսը՝ ներառեալ մայրաքաղաքը յայտնուեն խաւարում, իսկ մեծ գորավարժութիւնն էլ մնայ կիսատ:

Այս դէպքում սակայն խնդիրը գուցէ այն է, որ Ատրպէյճանի նախագահը Էրդողանին դարձեալ խնդրել է բարձրացնել հարցը Պուտինի առաջ, որի հետ Էրդողանը հանդիպումը Սեպտեմբերի 17-ին է՝ Սոչիում: Յայտարարուած է, որ քննարկուել է Միւսկի խմբի հարցը, սակայն անկասկած է, որ փաթեթը կը լինի բաւական մեծ, ներառեալ Կովկասն ու այդ թւում արցախեան հարցը, յամենայն դէպս անդրադարձի ձեւով:

Հետաքրքիր է այն, որ նախորդ տարի էլ Էրդողանը Պուտինի հետ հանդիպման մեկնելուց

առաջ եղաւ Պաքու, եւ այնտեղ ըստ երեւոյթին դարձեալ ստացաւ Ալիեւի խնդրանքը՝ բարձրացնել հարցը Պուտինի առաջ: Ալիեւն ինքը մատնուած է անյաջողութեան եւ թերեւս ակնկալում է, որ գուցէ Էրդողանը կը կարողանայ համոզել ՌԴ նախագահին: Բայց հարցն այն է, որ ապրիլեան պատերազմի օրերին ՌԴ նախագահը բաւական ցաւոտ շօշափեց խնդիրների այն «տեսլականը», որ առաջանում է իր համար Բաքուի ռազմական դիւանագիտութեան սնուցման եւ պատերազմի իրաւունքի «վաճառքի» դէպքում:

Դրանից յետոյ Պուտինը շոշափելիօրէն դադարեցրել է այդ «իրաւունքի» վաճառքը: Իսկ այդպիսի իրաւունքի այլ տուողներ կարող են լինել Միւսկի խմբի միւս երկու համանախագահները, որոնք սակայն դեռ Ռուսաստանից առաջ են հրաժարուել Ատրպէյճանին այդ իրաւունքը տալուց, իսկ ապրիլեան պատերազմից առաջ էլ թերեւս «լայնօրէն փակուած աչքով» են նայել այդ իրաւունքի օգտագործման մեծ հաւանականութեանը, հաշուարկելով դրա հնարաւոր ազդեցութիւնը Կովկասում անվտանգութեան հին՝ ռուս-թուրքական համակարգի վերջնական փակուղայնութեան կամ ձախողման առումով, ինչը թոյլ տուեց ռեգիոնը խոշոր հաշուով բերել անվտանգութեան նոր տրամաբանութեան հուն, Ռուսաստանին ցոյց տալով հին տրամաբանութեան մէջ մնալու հնարաւոր ծանր հետեւանքը:

Ի վերջոյ, 2017 թուականին Ալիեւի խնդրանքով տարած քննարկում պատերազմի իրաւունքի հարցը Պուտինի առաջ բարձրացրած

Էրդողանը ՌԴ նախագահի հետ հանդիպումից յետոյ յայտարարեց, թէ Պուտինը ասել է, որ յոյս չկայ, թէ հնարաւոր է տարած քննարկի վերադարձ:

Այն, որ Ալիեւը հերթական անգամ է հարցը բարձրացնում Էրդողանի առաջ՝ Պուտինի հետ հանդիպման շէմին, յուշում է, որ Սեպտեմբերի 1-ին Սոչիում Պուտինի հետ իր հանդիպմանը Ալիեւը չի կարողացել համեմատել ինչ, ինչն էլ յետոյ առաւել արձանագրուել է Սեպտեմբերի 8-ին Փաշինեան-Պուտին հանդիպումով: Դրանից մէկ շաբաթ անց էլ Նիկոլ Փաշինեանը մեկնեց Փարիզ, ըստ երեւոյթին ռեգիոնալ ստատուս-քոնոյի եւ անվտանգութեան հարցում Պուտինի հետ ձեռք բերուած պայմանաւորութիւնները Ֆրանսայի նախագահ Մակրոնի հետ արձանագրելու համար:

Միւս կողմից, իհարկէ, չի բացառուում, որ այդպիսով Էրդողանը փորձում է ընդամէնը ազատուել Ալիեւի խնդրանքներից, ցոյց տալով, որ անում է իր ուժերից եկածը, բայց չի ստացուում եւ դրա համար մեղաւոր են իհարկէ համանախագահները:

Ի վերջոյ, Էրդողանն անկասկած բաւական փորձառու է հասկանալու համար, թէ որքան անհետաքրքիր են Ալիեւի խնդիրները միջազգային օրակարգում: Այն դէպքում, երբ ինքը Էրդողանն էլ ունի շատ աւելի բարդ եւ պատասխանատու խնդիրներ: Պարզապէս նա չի կարող Ալիեւին ուղարկել «գրողի» կամ ուրիշի «ծոցը»: Այլապէս չէր շտապի Պաքու, ուր մեկնել էր Իսրայելի պաշտպանութեան նախարարը:

«ԼՐԱԳԻՐ»



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԳՆԱՎՈՐՈՒՄ ԳՆԱՎՈՐՈՒՄ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՅԵ ԱՍՏՊՈՒՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.


Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**



### ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Հայկ Մարութեան Պատրաստ է Նախընտրական Բանավեճի Քաղաքացետի Բոլոր Թեկնածուներուն Մասնակցութեամբ

Հայկ Մարութեանը պատրաստ է նախընտրական բանավեճի, բայց պայմանաւ, որ կըրոր սեղանի շուրջ միաժամանակ ներկայ գտնուին քաղաքացետի բոլոր 12 թեկնածուները: Ի պատասխան Նաչիրա Զօհրապեանի հնչեցուցած քննադատութեան, թէ Մարութեանը կը վախնայ բանավեճէն, կը թաքնուի Նիկոլ Փաշինեանի թիկունքին, Քաղաքացետի Պայմանագր կուսակցութեան քաղաքացետի թեկնածու Հայկ Մարութեանը



Քաղաքացետի Պայմանագր կուսակցութեան քաղաքացետի թեկնածու Հայկ Մարութեանը

թու հասնելու համար: Նշենք, որ «Բարգաւաճ Հայաստանի» թեկնածու Նաչիրա Զօհրապեանը սուր քննադատութեան ենթարկած էր Հայկ Մարութեանին՝ անոր հրապարակաւ բանավեճի կանչելով: «Փախնում ա, չի գալիս, գալ ի՞նչ խօսայ, գալ ինձ հետ քաղաքական հարթակում ի՞նչ բանավեճի, վախենում ա: Հիմա էլ ասում եմ՝ տղամարդ ես, հրաւիրում եմ բանավեճի: Արի առանց Նիկոլի», - ըսած էր Զօհրապեանը: Ան նշած էր նաեւ, թէ Մարութեանի գլխաւորած «Իմ քայլը» դաշինքի ցուցակին մէջ Սերժ Սարգսեանի փեսայ Միքայէլ Մինասեանի ազգականը՝ սանիկը կայ: «Հիմա մե՞նք ենք սերժական, ուրպական, թէ՞ դուք», - հարց հնչեցուցած էր «Բարգաւաճ Հայաստան» թեկնածուն:

«Նախ՝ ամէն ուժ ինքն է որոշում քարոզարշաւի իր ոճը: Կապուած բանավեճի հետ՝ ասեմ, որ շատ կարեւոր է մեզ համար, որ լինի արդար: Մենք ունենք 12 թեկնածու, ես փաստացի ունեմ 11 հաւասար մրցակից: Ես պատրաստ եմ գնալ բանավեճերի, շատ ողջունում եմ այդ միտքը, բայց պէտք է լինեն բոլոր թեկնածուները եւ պէտք է լինեն հաւասար պայմաններում, ոչ մէկին չի կարելի տալ ինչ-որ առաւելութիւն: Ոչ մի թեկնածուի չի կարելի տալ նախապատուութիւն», - ըսաւ Մարութեանը, աւելցնելով՝ իրեն տղամարդկութեան կոչ ընողները «քաղաքական հարքներ» կ'ընեն՝ ինչ-որ արդիւնքներ



## Ռոպերթ Քոչարեան Ընդունած է, որ «Քոնկրէս» Հիւրանոցը կը Պատկանի իր Ընտանիքին

Ռոպերթ Քոչարեանը բացառիկ հարցազրոյց տուած է Yerevan.Today-ին ուր խօսած է նաեւ իր հարստութեան մասին: «Իմ ընտանիքի անդամները 15-16 տարի զբաղուում են պիզնեսով, երբեք պետական պաշտօններ չեն զբաղեցրել, զբաղուում են պիզնեսով եւ որոշակի յաջողութիւնների հասել են: Բայց ինչ-որ ունի իմ ընտանիքը, իմ ընտանիքի անդամները, կամ ստեղծուած է գրոյցից, կամ գնուած է օրինական ճանապարհով: Բոլորը գրանցուած են Հայաստանի Հանրապետութեան պետեկեկիսթրում, եւ այստեղ որեւէ գաղտնիք չկայ: Եւ խօսքը, իհարկէ, չի գնում մի լիւրճաների կամ հարիւր հազարաւոր միլիոնների մասին: Եւ կարծում եմ՝ կը գալ ժամանա-

կը, երբ այդ յայտարարութիւն անողը պատասխան է տալու իր յայտարարութիւնների համար: Ինչ վերաբերում է, քոնքրէթ մեղադրանք կար, չէ՞, «Քոնկրէս» հիւրանոցի մասին. հիւրանոցը ձեռք է բերուել 2014-15 թուականներին, եւ 6-7 տարի պաշտօնում չէի, ի՞նչ կաշառք կարող է այստեղ լինել: Մարդիկ ուղղակի փրփուրներից կախուած՝ երէկ հիսթերիք վիճակում փորձում էին ինչ-որ բաներ ասել ժողովրդի ուշադրութիւնը շեղելու համար: Էստեղ ուրիշ ոչ մի բան չկայ: Ես պատրաստ եմ սպասել, թէ երբ են իրենք ապացուցելու իրենց ասածը, եւ եթէ չապացուցեն, ապա շատ ոչ նորմալ լիւրճան լինելու կայ իմ տուեալ դէպքում, արդէն, սկսելու խօսել այդ մարդկանց հետ:

## Փաշինեանը «Քաղաքական Դիակներ» Անուանած է Երկրորդ Եւ Երրորդ Նախագահները ու Անոնց Շրջապատը

«Ռոպերթ Քոչարեանը քաղաքական դիակ է», վարչապետ Նիկոլ Փաշինեան այսպէս արձագանցեց Հայաստանի երկրորդ նախագահի այն յայտարարութեանը, թէ Փաշինեան պիտի փոշմանի: Օրերս լրատուամիջոցներէն մէկուն տուած հարցազրոյցի ժամանակ Քոչարեանը, անդրադառնալով իրեն «Մարտի 1»-ի գործով առաջադրուած՝ սահմանադրական կարգը տապալելու մեղադրանքին, մասնաւորապէս ըսած էր. - «Ինչու ենք ես եւ Փաշինեանն այսօր տարբեր բեւեռներում՝ միանշանակ պատասխան չունենմ, հաւանական է, որ վարչապետն իմ մէջ վտանգ է տեսնում: Սակայն կարծում եմ, որ Նիկոլ Փաշինեանը կը փոշմանի, որ որոշել է հետ «գլուխ դնել»: «Կարծում եմ, էլ յայտարարութիւններով պարոն Քոչարեանը ցոյց է տալիս իր քաղաքական ընկալումների եւ ըմբռնումների մակարդակը: Սա իրենց թաղի, քուչի կուր չի,

որտեղ պարտուողները հեռանալիս ասում են՝ «դէ դու կը փոշմանես չըր, դէ դու կը տեսաս», - նախկին նախագահին հակադարձես Հայաստանի վարչապետը: «Ասում է՝ իր մէջ վտանգ էք տեսնում, սպառնալիք էք տեսնում», - լրագրողներէն մէկուն այս դիտարկման Փաշինեանը արձագանցեց. - «Գիտէ՞ք, ինձ «Քոմերսանթ» թերթը հարց էր տուել, որ «ասում են, որ Դուք դա անում էք քաղաքական գործօնը չէ՞ք քայքայելու համար», ես ասացի եւ հիմա էլ ասում եմ՝ Ռոպերթ Քոչարեան անունով քաղաքական գործօն Հայաստանում գոյութիւն չունի: Ինչպէս Սերժ Սարգսեանը, այնպէս էլ Ռոպերթ Քոչարեանը եւ նրանց շրջապատը՝ քաղաքական դիակներ չեն մենք գործ ունենք, սակայն, քաղաքական դիակ լինելը որեւէ մէկին չի ազատում օրէնքի առաջ ունեցած պարտաւորութիւններից, եւ սրանով ամէն ինչ ասուած է»:

## Արամ Սարգսեանի Ելոյթը Բարեկամական էր, Թշնամանք Չկար. Արտակ Զէյնալեան

«Արամ Սարգսեանի երեկուայ ելոյթը միայն արտայայտում էր բարեկամին յատուկ մտահոգութիւն»:  
«Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ մեկնաբանելով էրբեքուների վարչական շրջանին մէջ Երեւանի աւագանիի ընտրութիւններու քարոզարշաւի ժամանակ «Լոյս» դաշինքի մաս կազմող «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեանի ելոյթը, նման կարծիք յայտնեց դաշինքի քաղաքացետի թեկնածու Արտակ Զէյնալեանը: Սարգսեանն իր ելոյթին մէջ քննադատած էր վարչապետին, պնդելով, թէ Փաշինեանը հակադեմոկրատիկութեան փորձերու մէջ կը մեղադրէ իր հետ ճանապարհ անցած խումբը: «Արամ Սարգսեանի խօսքը մտերմիկ էր, բարեկամական, բարի, դրա մէջ չկար ակրեսիա, չկար հեզմանք, չկար սարքազմ, դրա մէջ կար մտահոգութիւն բարեկամին ներյատուկ», - ըսաւ Զէյնալեանը: «Ազատութեան» հարցին՝ արդե՞օք քարոզարշաւի ընթացքին հնչած ելոյթները մտահոգութիւն չեն առաջացրել, որ երբեմնի դաշնակիցներուն միջեւ գործընկերային յարաբերութիւններն այլեւս պիտի չհարուսնակուին, Զէյնալեանը պատասխանեց՝ իրենք

պիտի շարունակեն բարեկամական յարաբերութիւնները: «Գործընկերային յարաբերութիւնները շարունակուում են: Մենք համարել ենք, որ երկրում չունենք թշնամիներ, որոնց պէտք է մղել դուրս: Որեւէ մէկին լուսանցք չենք մղելու: Մենք բարեկամական յարաբերութիւնների մէջ ենք մեր «Ելք» խմբակցութեան միւս գործընկերներին հետ: Նրանք մեր գործընկերներն են, մեր մրցակիցներն են: Մենք այլ ձեւաչափով ենք մասնակցում աւագանու ընտրութիւններին եւ պատրաստուում ենք ստանձնել Երեւանի կառավարման պատասխանատուութիւնը», - շարունակեց «Լոյս» դաշինքի թեկնածուն: Արտակ Զէյնալեանը Երեւանի աւագանիի ընտրութիւններու քարոզարշաւն աննախադէպ կը համարէ: Ան կոչ կ'ընէ՝ վերադառնալ բարի միջոցառումին: «Այն բառամիջոցը, որ օգտագործուում է, կամ թեխնոլոգիաները, որ օգտագործուում են, մնացուկներ են եւ անհամապատասխան են այն իրավիճակին, որ ստեղծուած է: Չի մասնակցում այն ուժը, որը մշտապէս ասոցացուում է բիրտ ուժի, զոռապաշտութեան հետ: Կարծում եմ՝ քարոզարշաւը պէտք է անցկացուէր այլ լոյսի ներքոյ», - ըսաւ Արտակ Զէյնալեանը:

## «Զիպիլիքսի» Վերաբացուած Գործի Քննութիւնը

«Զիպիլիքսի» գործով Յատուկ ֆիննական ծառայութիւնը (ԾՔԾ) մեղադրանք առաջադրած է 11 անձի: Գլխաւոր դերերուն մէջ Երեւանի քաղաքապետարանի տնտեսութեան վարչութեան պետ Հրայր Անտոնեանը եւ «ՍԱՍ» հանրախանութներու ցանցի տնօրէն Ստեփան Սահակեանն են: Մոտ 3 ամիս քննելով վերաբացուած գործը՝ ԾՔԾ-ը պարզած է, որ Հրայր Անտոնեանը, 2017 թուականի 14 Մայիսին Երեւանի աւագանիի ընտրութիւններուն ընդառաջ Հանրապետականի օգտին առաւելագոյն քուէներ ապահովելու համար 10 հազարական դրամ կաշառք բաժնած է ընտրողներուն: Անտոնեանը, որ այդ ժամա-

նակ կը գլխաւորէր քաղաքացետի թեկնածու Տարօն Մարգարեանի նախընտրական շտապը, այս գործին մէջ ան համագործակցած է «ՍԱՍ Կրուփ» ընկերութեան հանրախանութներու ցանցի տնօրէն Ստեփան Սահակեանի հետ: «Երկուսով ղեկավարել են Արաբկիր վարչական շրջանում գործող շտապը, ունեցել են ենթաշտապերի պետեր, կատարուել է աշխատանքի բաժանում, իւրաքանչիւր տարածքում ունեցել են իրենց պատասխանատուները՝ ըստ ընտրատեղամասերի, եւ նրանց միջոցով ապահովել են Հանրապետական կուսակցութեան համար համապատասխան քուէները, որի դիմաց գումարներ են բաժանել»:



# ԼՈՒՐԵՐ

## Ամերիկացի Փորձագետ. «Ռուսաստանը Չի Հանդուրժի Ժողովրդավար Հայաստան».

Ռուսաստանը կը խոչընդոտէ Հայաստանի ժողովրդավարացման բոլոր ջանքերը, քանի որ անոնց մէջ վտանգ կը տեսնէ: Այս մասին, «Ամերիկացի Ձայն»-ի հետ գրոյցի ժամանակ նշած է Ամերիկեան արտաքին քաղաքականութեան խորհուրդի վերլուծաբան Սթիվըն Պլանքը՝ աւելցնելով. «Ռուսաստանը չի հանդուրժեր ժողովրդավար Հայաստան»:

Վերլուծաբանի խօսքով, Ռուսաստանը Հայաստանի վրայ ճնշում պիտի գործադրէ առաջին հերթին դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման ոլորտէն ներս.

«Անհնար է ժողովրդավարութիւն գարգացնել, քանի դեռ դարաբաղեան պատերազմը կը շարունակուի, քանի որ ամբողջ հին վերնախաւը իր կարողութիւնն ու դիրքը ստեղծեր է դարաբաղեան պատերազմի վրայ: Ու քանի դեռ պատերազմը կը շարունակուի, անոնք պիտի մնան ազդեցիկ եւ պիտի խափանեն ժողովրդավարութեան ցանկացած ընթացք, որով կը փորձէ շարժվել Փաշինեանը»:

Սակայն, Հայաստանն ինքնուրոյն չի կրնար պարտադրել Ատրպէյճանին պահպանել ձեռք բերուած պայմանաւորութիւնները: Ռուսաստանը այն չի ցանկար իսկ Եւրոպան ի վիճակի չէ ընել: Ուստի, Միացեալ Նահանգները պէտք է երաշխաւորէ խաղաղութեան պահպանումը դարաբաղեան հակամարտութեան շրջանին, բան մը, որ Ուաշինկթընը մինչ արդէ աշխոյժօրէն չէ ըրած, կը նշէ Պլանքը:

«Միացեալ Նահանգները պէտք է միջամտէ եւ իրական միջնորդութիւն ապահովէ, որ թոյլ կու տայ կողմերուն խաղաղութեան մէջ ապ-»

րիլ: Անոնցմէ չի պահանջուիր իրար սիրել, այլ կը պահանջուի յարգել ձեռք բերուած պայմանաւորութիւնները, որ թոյլ կու տայ երկու ժողովուրդներուն գարգանալ եւ բարգաւաճիլ», - ասեր է ան:

Սթիվըն Պլանքի խօսքով, եթէ ինք ԱՄՆ-ի նախագահի խորհրդականն ըլլար, ապա խորհուրդ կու տար Տանըլտ Թրամփին հանդիպիլ վարչապետ Փաշինեանի հետ եւ փոխանցել Միացեալ Նահանգներու՝ հակամարտութեան խաղաղ կարգաւորման աջակցելու պատրաստակամութիւնը:

Ռազմավարական եւ միջազգային հետազոտութիւններու կեդրոնի վերլուծաբան Ճէֆ Մանրօֆի կարծիքով, Մոսկուան այնուամենայնիւ ակնյայտօրէն չի միջամտեր Հայաստանի «թաւշեայ լեզափոխութեան» փորձելով չկրկնել Վրաստանի եւ Ուքրաինայի մէջ գործած սխալները.

«Վերջին շրջանին սակայն, կը նկատուի Ռուսաստանի առաւել յարձակողական քաղաքականութիւնը Հայաստանի նոր իշխանութիւններու նկատմամբ: Անոնք կը փորձեն յիշեցնել Հայաստանին անոր շուրջ աշխարհաքաղաքական իրավիճակի եւ Ռուսաստանի դերի մասին»:

Հայաստանը, որուն չորս հարեւաններէն երկուքի հետ սահմանները փակ են, Ուքրաինայ կամ Վրաստան չէ եւ անկախ անկէ, թէ ինչպիսի կառավարութիւն կ'ըլլայ Հայաստանի մէջ, այն ստիպուած պիտի ըլլայ հաշուի առնել աշխարհագրական իրավիճակը եւ չվատթարացնել յարաբերութիւնները Մոսկուայի հետ, համոզուած է փորձագէտը:

## Երտողան. Թուրքիան Մինչեւ Վերջ Ղարաբաղեան Տագնապը Լուծելու Հարցին Մէջ Պիտի Աջակցի Ատրպէյճանին.

«Ատրպէյճանի ուրախութիւնը թուրքիոյ ուրախութիւնն է, Ատրպէյճանի ցաւը թուրքիոյ ցաւն է», - 15 Սեպտեմբերին, այս մասին Պաքուի մէջ յայտարարած է թուրքիոյ նախագահ Էրտողան՝ թրքական կողմէ կասեան բանակին նուիրուած հեծելազօրքի շքերթի ընթացքին իր արտասանած խօսքին մէջ:

Ընդգծելով, որ թուրքիան Ատրպէյճանի կարեւորագոյն գործընկերն է, յատկապէս քաղաքական եւ զինուորական ոլորտներուն մէջ, Էրտողան հաւաստած է, թէ թուրքիան մինչեւ վերջ պիտի աջակցի Ատրպէյճանի ջանքերուն, վերջինիս համար ծանրագոյն ինչդիրք՝ դարաբաղեան տագնապը լուծելու հարցին մէջ:

«Ժամանակը եկած է վերջ դնելու սպասումներուն մեր աւելի քան մէկ միլիոն եղբայրներուն,

որոնք տարիներ շարունակ կ'ապրին հայրենիքի կարօտով: Անոնք, որոնք բռնազրաւուած կը պահեն եղբայրական Ատրպէյճանի տարածքին 20 առ հարիւրը, ի գուր մեզմէ սահմանի բացում կ'ակնկալեն: Տուեալ հարցին մէջ թուրքիոյ դիրքորոշումը յայտնի է, յստակ է եւ ճշգրիտ», - յայտարարած է թուրքիոյ նախագահը՝ աւելցնելով, - «Այդ հարցին մէջ առաջին քայլիը պէտք է ձեռնարկէ բռնազրաւուողը»:

Էրտողան միեւնոյն ժամանակ շեշտած է, որ թուրքիա կ'ուզէ բարելաւել կամ «շարունակել բարի կապերը» բոլոր դրացիներուն հետ, սակայն, անոր համաձայն, դարաբաղեան տագնապի լուծումը կը հանդիսանայ Հայաստանի հետ կապերու վերականգնման կարեւորագոյն պայման:

## Իսրայէլի Պաշտպանութեան Նախարարը Ատրպէյճանի Մէջ «Կը Զգամ Ինչպէս Տանս Մէջ»

Ուրբաթ օր Ատրպէյճանի վարչապետ Նովրուզ Մամետովն ընդունել է պաշտօնական այցով Պաքու գտնուող Իսրայէլի պաշտպանութեան նախարար Աւիգոր Լիպըրմանը:

Կողմերը քննարկած են ռազմական եւ այլ ոլորտներու մէջ համագործակցութեան գարգացման վերաբերող հարցեր:

«Երկու երկիրները շահագրգռուած են յարաբերութիւններու խո-

րացմամբ, որոնք կարեւոր են տարածաշրջանային եւ միջազգային անվտանգութեան տեսանկիւնէ», - Մամետովի խօսքերը մէջբերած է «Թուրան» լրատուական գործակալութիւնը:

Ի պատասխան՝ Իսրայէլցի պաշտօնեան յայտարարել է, թէ «բազմիցս այցելել է Ատրպէյճան եւ իրեն այդտեղ կը զգայ ինչպէս իր տան մէջ»:

## Նիկոլ Փաշինեանը Պատրաստ է Բանակցելու Հայաստանի Անունով, Բայց ոչ Արցախի



Վարչապետ Նիկոլ Փաշինեանը ելոյթ կ'ունենայ խորհրդարանէն ներս

«Ես բազմիցս պատրաստակամութիւն եմ յայտնել ներգրաւուել բանակցային գործընթացի մէջ եւ ասել եմ հետեւեալը՝ ես ինձ իրաւասու եմ համարուած բանակցել ՀՀ անունից, որովհետեւ Հայաստանի վարչապետն եմ», - այս մասին ԱԺ-կառավարութիւն հարց ու պատասխանի ժամանակ ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ անդրադառնալով ատրպէյճանական կողմէն յայտարարութիւններուն, թէ Հայաստանը կը խոչընդոտէ բանակցային գործընթացը:

Փաշինեանը նշեց, որ իրեն իրաւասու չի համարեր բանակցելու Արցախի անունէն, քանի որ Արցախի հանրապետութեան նախագահն ու վարչապետը չէ: Ան նշեց, որ Արցախի ժողովուրդը չի մասնակցիր Հայաստանի մէջ իշխանութեան ձեւաւորման, որովհետեւ անոնք ունին իրենց սեփական իշխանութիւնը, իրենց կառավարութիւնը, խորհրդարանն ու նախագահը, որ իրաւասու է բանակցելու Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան անունէն:

«Ուզում եմ ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն հանգամանքի վրայ, որ ասուածի մէջ որեւէ սենսացիոն (զգայացում) բան չկայ, որովհետեւ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահող երկրների նախագահները յայտարարութիւնում եւս ընդգծուում է Արցախի վերջնական կարգավիճակի առումով Արցախի ժողովրդի կամ քի արտայայտման անհրաժեշտութիւնը: Եւ ըստ հոլթեան այդպիսով ընդգծ-

ուած է Արցախի՝ հակամարտութեան կողմ լինելու հանգամանքը: Եւ շատ պարզ հարց ենք մենք դնում՝ մենք բանակցում ենք ուղղակի բանակցելու, թէ՞ հարցը լուծելու համար: Եթէ բանակցում ենք հարցը լուծելու համար, ինչպէ՞ս ենք մենք պատկերացում հարցի լուծումն առանց հակամարտութեան կողմի: Եթէ մենք բանակցում ենք բանակցելու համար, մենք պատրաստ ենք նաեւ այդպիսի ֆորմաթով բանակցել, բայց քանի դեռ չի արձանագրուել Արցախի ժողովրդի ներկայացուցչի ներգրաւման անհրաժեշտութիւնը, նշանակում է՝ մենք չենք մօտեցել հարցի կարգաւորմանը», - ըսաւ ան:

Նիկոլ Փաշինեանն ըսաւ, որ իր կարծիքով բանակցային գործընթացին այսօր աւելի շատ կը խանգարէ այն ռազմատենչ միջոցները, որ կը հաստատուի Ատրպէյճանի ղեկավարութեան ոչ կառուցողական հետորաբանութեան եւ գործողութիւններու արդիւնքով:

«Ես վերահաստատում եմ բանակցութիւններին մասնակցելու իմ պատրաստակամութիւնը, եւ չկայ որեւէ դէպք, որ Հայաստանը հրաժարուել է դրանից: Յունիսի 14-ին ՌԴ նախագահ Վլատիմիր Փութինն առաջարկեց, որ ուղղակի ինձ ու իշամ Ալիեւին ծանօթացնի, եւ ես այդ առաջարկն ընդունեցի, մենք ծանօթացանք, որեւէ բովանդակային քննարկում տեղի չունեցաւ: Ես պատրաստ եմ ներգրաւուել բանակցային գործընթացում, մեր Արտաքին գործերի նախարարը լիարժէք ներգրաւուած է բանակցա-

## Էտուարտ Նալպանտեանը՝ Արցախի Հարցով Փաշինեանի Յայտարարութեան Մասին

Անդրադառնալով ԱԺ-ի մէջ վարչապետ Նիկոլ Փաշինեանի այն յայտարարութեան, թէ երբ ստանձնած է ՀՀ վարչապետի պաշտօնը, Արցախի հակամարտութեան կարգաւորման հարցով ժառանգութիւն ստացած է տարբերակ մը, ուր Արցախի կարգավիճակի մասին ընդհանրապէս ոչ մէկ բան չկայ, Արտաքին Գործոց նախկին նախարար Էտուարտ Նալպանտեան ցաւ յայտնած է որ վարչապետին մոլորութեան մէջ նետած են:

«Մենք բազմիցս ենք ասել եւ կարող եմ միայն վերահաստատել, որ դարաբաղեան հիմնախնդրի կարգաւորման վերջին տարիների աշխատանքային բոլոր փաստաթղթերում կարծիք թելով անցնում է, որ Լեւոնային Ղարաբաղի կարգավիճակը պէտք է որոշուի նրա

բնակչութեան կողմից՝ միջազգային իրաւական ուժ ունեցող արտայայտութեան միջոցով: Յաւում եմ, որ վարչապետին մոլորութեան մէջ են դրել՝ ինչ-որ փաստաթուղթ ներկայացնելով», - ըսեր է Նալպանտեանը:

Յիշեցնենք, որ նախօրէին ԱԺ-ի մէջ վարչապետ Նիկոլ Փաշինեանը յայտարարած է. «Երբ ես ստանձնել եմ ՀՀ վարչապետի պաշտօնը, ստացել եմ ժառանգութիւն մի տարբերակ, որտեղ Արցախի կարգավիճակի մասին ընդհանրապէս ոչ մի բան չկայ: Կայ միայն հետեւեալը, որ պէտք է Ատրպէյճանին վերադարձուեն ձեզ յայտնի տարածքները: Ես սա ձեզ ասում եմ պաշտօնապէս: Ես չեմ ասում, որ դուք այդ տարբերակն ընդունել եւ ստորագրել էք»:



# Լիբանանի Քաթալպ Կուսակցութեան Նախագահին Այցը Լոս Անճելոս



Հնչակեան Կուսակցութեան Գերկայացուցիչները Սամի Ճեմայէի հետ

Այս օրերուն Լոս Անճելոս կը գտնուի Լիբանանի Քաթալպ Կուսակցութեան նախագահ եւ Խորհրդարանի անդամ Սամի Ճեմայէլ: Այս առթիւ Հարաւային Գալիֆորնիոյ Քաթալպ (Փաղանգաւոր) կուսակցութեան շրջանային վարչութիւնը, անցեալ Կիրակի, Սեպտեմբեր 16, 2018, Կլենտէյլի «Էմպէսի Սուիթ» հիւրանոցին մէջ ընդունելութեամբ մը պատուեց հիւր ղեկավարը:

Սոյն ընդունելութեան ներկայ էին ԱՄՆ-ի տարբեր նահանգներէն ժամանած ակնաւոր լիբանանցիներ, ինչպէս նաեւ տեղական ծանօթ դէմքեր, Քաթալպ Կուսակցութեան մասնաճիւղերու ղեկավարներ, հոգեւորականներ, Գալիֆորնիոյ մէջ հաստատուած արաբ-ամերիկեան միութիւններու եւ Կուսակցութիւններու ներկայացուցիչներ:

Լիբանանի մէջ գործող կուսակցութիւններէն ներկայ էին ՍԳ Հնչակեան Կուսակցութեան, Ընկերավարական Յառաջդիմական Կուսակցութեան, «Լիբանանեան Ուժեր» կուսակցութեան եւ «Մուսթաֆայա» շարժումի ներկայացուցիչները:

Գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը: Լիբանանի, ԱՄՆի եւ Քաթալպ Կուսակցութեան քայլերգներու ունկնդրութենէն ետք ողջոյնի խօսքով հանդէս եկան Լոս Անճելոս գաւառի Շէրիֆ Ճէյմս Մատնալտը, Լոս Անճելոսի Քաթալպ Կուսակցութեան վարչութեան ատենապետ Ժոզէֆ Ֆրէյմը, ԱՄՆ-ի տարբեր շրջաններու քաթալպներու անունով Ասատ Ռահահալը: Գրեթէ բոլորն ալ իրենց ելոյթներուն մէջ շեշտը դրին ազգային միասնութեան, Լիբանանի խաղաղութեան եւ բարօրութեան:

## Նախագահ Մաքրոն Փաշինեանը Ընդունեց

Շարունակուած էջ 1-էն

րան: Քաղաքապետի հետ առանձնազրոյցէն ետք կողմերը հանդէս եկած են ելոյթներով:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը յիշեցուց, որ հայկական թաւաշէն յեղափոխութիւնը սկսաւ Ֆրանսայի հրապարակէն եւ ամպիոնի ետին Ռոտէնի քանդակն էր: - «Դա խորհրդանշիչ էր, թէ ինչպէս պէտք է, պահպանելով այդ քանդակը, խաղաղ գործողութիւններ կատարել առանց ուժի գործադրման», - ըսած է ան:

Իր հերթին Փարիզի քաղաքապետը հիացմունքով խօսած է, որ Նիկոլ Փաշինեանի թիկունքին երկ-

հրամայականին վրայ:

Վերջին խօսք առնողն եղաւ Լիբանանի Քաթալպ Կուսակցութեան նախագահ եւ Խորհրդարանի անդամ 37-ամեայ Սամի Ճեմայէլ: Ան նախ շնորհակալութիւն յայտնեց այն միջոցառումը կազմակերպող յանձնախումբին եւ ներկայ հասարակութեան: Երիտասարդ քաղաքագետ երկրի հիմնահարցերէն մին նկատեց ազգային միասնականութեան անհրաժեշտութիւնը:

Ան դէմ արտայայտուեցաւ խտրականութեան եւ անջատողականութեան եւ հատուածամոլ ծայրայեղ շարժումներուն: Խիստ կենսական համարեց երկրի գերագոյն շահերուն ու բարօրութեան համար տարրուող համադրական աշխատանքներուն գորավիզ կանգնելը:

Սամի Ճեմայէլ շեշտելով հանդերձ որ ինք քրիստոնեայ կուսակցութեան մը ղեկավարն է սակայն կենսական նկատեց քրիստոնեայ շիւ, սիւննի եւ այլ համայնքներու միջեւ համախոհականութիւնն ու անշահախնդիր մօտեցումը, Լիբանանի գերակայութեան ու բարգաւաճումին համար եւ յարեց «Մեր խորհրդարանը՝ գեղեցիկ խճանկար մըն է եւ համադրումը Լիբանանի բոլորը համայնքներուն»:


Հիւր ղեկավարը միաժամանակ դատապարտեց արտագաղթը եւ եսակեղրոն անտարբերութիւնը: «Մենք 6000 նահատակներ տուած ենք Լիբանանի համար, որպէս զիստ մնայ անկախ ու գերիշխան», շեշտեց ան:

Աւարտին Սամի Ճեմայէլ կողմը օգնել Լիբանանեան հայրենիքի բարգաւաճումին եւ ամէն գնով սատար հանդիսանալ անոր կայունութեան ու յառաջընթացին:

տասարդութիւնն է, որ Հայաստանի մէջ իրականացուց թաւաշէն յեղափոխութիւնը:

Վարչապետը ֆրանսական «Քարֆուր» հանրախանութի օրինակը բերաւ՝ նշելով, որ այն ըլլալով դաշտի մէջ միակ օրինական գործող մեծ խանութը՝ աստիճանաբար փոքրացեր ու հասած էր փակման եզրին: Բայց հիմա, ըստ Փաշինեանի, ստեղծուած են բոլոր պայմանները, որ «Քարֆուր»-ը ընդարձակէ գործունէութիւնը Հայաստանի մէջ:

Փաշինեան Փարիզ ժամանելէն ետք օդակայանէն ուղղուեցաւ Փարիզի «Երեւան» պուրակ, ուր ծաղկեպսակ տեղադրեց կոմիտասի յու-



## Նիւ Եորքի «Մեթրոփոլիթըն» թանգարանին մէջ պիտի բացուի «Արմենիա» ցուցահանդէսը

22 Սեպտեմբերին աշխարհի խոշորագոյն թանգարաններէն մէկուն՝ Նիւ Եորքի հանրայայտ «Մեթրոփոլիթըն» թանգարանին մէջ պիտի ներկայացուի «Արմենիա» խորագրով ծաւալուն ցուցահանդէսը, որ, ինչպէս ասուլիսի ժամանակ ընդգծեց Մշակոյթի նախարար Լիլիթ Մակունցը, պիտի ներկայացնէ հայկական արուեստի ու մշակոյթի լաւագոյն նմուշները սկսած 4-րդ դարէն մինչեւ 17-րդ դար:

«Յուցադրութիւնը նուիրուած է հայ ժողովրդի գեղարուեստական եւ մշակութային ձեռքբերումներին՝ համաշխարհային համաթեքսթում: Յուցադրութեան ներկայացուած են լինելու թիւով 140 նմուշներ, որոնցից մեծ մասը ներկայացուել են Հայաստանի Հանրապետութեան կողմէ: Մասնաւորապէս, Հայաստանի պատմութեան թանգարանից՝ 34 նմուշ, էջմիածնի Մայր աթոռի թանգարանէն՝ 20 նմուշ եւ Մատենադարանից՝ 28 նմուշ»:

Ուշագրաւ է, որ ցուցահանդէսի կազմակերպման գործին, նախարարի փոխանցմամբ, իրենց որոշակի ներդրումը ունեցած են սփիւռքի մէջ գործող շարք մը կառույց-

ներ. - «Մասնաւորապէս, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը Լիբանանից, Սուրբ Յակոբեանց եկեղեցու եղբայրութիւնը Երուսաղէմից, Մխիթարեան միաբանութիւնը Վենետիկից, Գալուստ Կիւլպէնքեան թանգարանը Լիզապոնից, Ամերիկայի Միացեալ Նահանգների արեւելեան թեմը Նիւ Եորքից, Ամերիկայի հայկական թանգարանը Պոստոնից, ինչպէս նաեւ Ալեքս եւ Մարի Մանուկեան թանգարանի հաւաքածուները Միչիկանից»:

Մատենադարանի տնօրէն Վահան Տէր-Ղեւոնդեանը նշեց, որ մինչեւ ցուցահանդէսի բացումը թանգարանը քաթալպ պիտի հրատարակէ, որու հեղինակը ցուցահանդէսի համադրող բիւզանդապետ Հելէն Էւանսն է, որ աշխատած է նաեւ Մատենադարանի մէջ:

Յուցահանդէսի բացման ներկայ պիտի գտնուին Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը, Մշակոյթի նախարար Լիլիթ Մակունցը, Մատենադարանի տնօրէն Վահան Տէր-Ղեւոնդեանը եւ այլք: Մինչեւ 25 Սեպտեմբեր ցուցահանդէս պիտի այցելէ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

## Գլխաւոր Հիւպատոս Արմէն Բայբուրդեան

Շարունակուած էջ 1-էն

ման յարգանքի մեր տուրքը մատուցեց բոլոր մշտապէս հայ տղամարդկանց եւ կանանց, որոնք ջանք ու եռանդ չեն խնայել այդ նուիրական նպատակի իրականացման համար:

Անկախութեան հռչակումից 27 տարի անց, մեր այսօրուայ վերածնունտը հայրենիքը յոյսի եւ լոյսի ապագայ է բացում անխտիր բոլորիս համար: Մենք պէտք է միասին ուղի հարթեցնենք մեր փայլալուստ ապագան, դէպի մեր հայրենի պետութեան ժողովրդավարական, ապահով ու բարօրութեան վրայ հիմնուած հասարակարգը: Մեր փայլուն երիտասարդութիւնը իր բարձր արժեքներով արդարեւ, մեր ամբողջ ժողովուրդը ապացուցեց, որ արժանի է այդ պայծառ ապագայի իրական կեանքի կոչմանը: Ես այժմ միայն կոչ չեմ անում մեր ակունքով նպաստելու մեր պաշտելի

Հայաստանի զարգացմանը: Ես կոչ եմ անում անմիջականօրէն ստանձնել մեր բոլորիս՝ Հայաստան վեհօրէն կոչուող երկրի վերակերտումն ու զարգացումն այն հիմնասիւնների վրայ, որ ձեր երազածն է:

Իմ դիւանագիտական առաքելութեան արեւմտամերիկեան բազմաբովանդակ խնդիրների հետ մեկտեղ, ես այստեղ՝ Լոս Անջելես, վերստին եկել եմ որպէս Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր հիւպատոս, ծառայելու Ձեզ՝ կալիֆորնիական պետութեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգների մեր հայրենակիցներին՝ ի շահ մեր հայրենիքի, յանձնառութիւն ստանձնելով գործնականում կամրջելու Կալիֆորնիան Հայաստանի հետ:

Կեցցէ Հայաստանի անկախութիւնը, կեցցէ Հայաստանը, կեցցէ կալիֆորնիական պետութիւնը ու ամբողջ հայ ժողովուրդը:

շարժանին դիմաց՝ յարգանքի տուրք մատուցելով Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակին:

Անուհետեւ վարչապետ Փաշինեան ընթրիքի հրաւիրուած էր Ֆրանսայի հայ համայնքի ներկայացուցիչներուն կողմէ, որոնց շարքին եղած են Ֆրանսայի Ազգային ժողովի հայազգի պատգամաւորներ, քաղաքական, հասարակական գործիչներ, գործարարներ, արուեստագէտներ, յատկապէս, Լիոնի

քաղաքապետ Ժորժ Քեփենէքեան, Փարիզի 9-րդ թաղամասի փոխքաղաքապետ Ալեքսի Կովչեան, Ֆրանսայի կառավարութեան նախկին անդամ Փաթրիք Տեւէճեան, գործարարներ՝ Դանիէլ Քիւրքեան, Սերժ Զուրուք, Վարդան Սիրմաքէշ, Արմէն Պետրոսեան, Ալէն Միքէլի, Ֆրանսայի թատերական Գործիչներու Միութեան նախագահ Ալէն Թէրզեան, աշխարհահռչակ ֆուլթայոլիսթ Իւրի Ճորկայէլ եւ այլք:



# Վարչապետ Նիկոլ Փաշինեանի Հարցազրոյցը Ֆրանսական Le Monde Օրաթերթին «Պարուն Ուզում է Ստանալ Լեռնային Ղարաբաղը՝ Առանց Այնտեղ Ապրող Բնակչութեան»



- Իշխանութեան գալուց չորս ամիս անց ինչ՞ն էր յաջողել փոխել Հայաստանում:

- Մամուլն այսօր ազատ է, քան երբեք: Առաջին անգամ Երրորդ Հանրապետութեան պատմութեան մէջ (սկսած 1991թ.) չկան այլևս օրէնքից վեր գտնուողներ եւ արտօնեալներ: Մենք աննախադէպ պայքար ենք մղում կոռուպցիայի եւ ստուերային տնտեսութեան դէմ: Այլևս չկան տնտեսական մենաշնորհներ: Երեւանում Սեպտեմբերի 23-ին տեղի կ'ունենան ընտրութիւններ, որոնք կը լինեն իր պատմութեան մէջ ամէնից ազատը: Ի տարբերութիւն միւս յեղափոխութիւնների, գոնէ նրանց, որ ես գիտեմ, մեր յեղափոխութեանը չյաջորդեց տնտեսական անկում: Հակառակը՝ ցուցանիշներն աւելի շուտ դրական են. կապիտալը վերադառնում է երկիր, անշարժ գույքի գինը բարձրանում է, բանկերում աւելանում է կապիտալը նաեւ աւանդների տեսքով: Մենք յաջողել ենք կեանքի կոչել դեմոկրատական կառավարման մի նոր եղանակ՝ ուղիղ ժողովրդական կառավարում:

- Դուք ընտրուեցիք խորհրդարանի կողմից՝ ժողովրդական ճնշման ներքոյ, բայց այնտեղ դեռ գերակշռում են Սերժ Սարգսեանի նախկին իշխանութեան պատգամաւորները: Արդեօ՞ք դա տեսական կարող է լինել:

- Ի սկզբանէ, երբ ընտրվեցի վարչապետ Ազգային ժողովի կողմից, ես կարող էի անվերապահ վստահ լինել միայն չորս քուէի վրայ, այդ թւում եւ՝ իմ: Բայց նախկին ռեժիմը հարկադրուած էր տեղի տալ: Ժողովուրդը վստահութիւն չունի այս խորհրդարանի նկատմամբ, եւ դա իսկական սեւ

կէտ է մեր քաղաքական իրականութեան համար: Բայց պէտք է դիտարկել իրավիճակն իր դինամիկայի մէջ: Իմ ընտրուելուց քսան օր անց խորհրդարանը քուէարկեց կառավարութեան ծրագրի օգտին՝ որոշելով անցկացնել արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ մէկ տարուայ ընթացքում: Այդ որոշումը պիտի ի կատար ածուի, եւ եթէ խորհրդարանը վերանայի իր իսկ ստանձնած պարտաւորութիւնը, բնակչութիւնը կրկին ոտքի կը կանգնի: Մեր ընդդիմախօսները կարծում էին, թէ մեր ժողովրդականութիւնը կը թուլանայ անցնող ամիսներին հետ: Անգամ մեր համակիրներին ցանկանում էին, որ հնարաւորինս արագ կազմակերպենք ընտրութիւնները: Մեր հայրենակիցները կարող են տեսնել՝ ինչ ենք անում մենք, եւ ժամանակն աշխատում է մեր օգտին:

- Ձեր իշխանութեան գալուց ի վեր՝ դուք հանդիպել էք նախագահ Վլադիմիր Պուտինին երեք անգամ: Կարո՞ղ է արդեօք Հայաստանը վարել կատարելապէս անկախ քաղաքականութիւն՝ իր դաշնակից Ռուսաստանի առումով:

- Մենք բոլոր կամ հակա չենք ո՛չ Ռուսաստանին, ո՛չ Ամերիկային, ո՛չ Եւրոպային, ո՛չ Իրանին: Հայաստանն ինքնիշխան պետութիւն է, եւ իմ կառավարութիւնը պաշտպանում է բացառապէս մեր ժողովրդի եւ երկրի շահերը: Սա պարզ էր դեռ Ռուսաստանի Գաշնութեան նախագահի հետ ունեցած իմ առաջին զրոյցներից, ով իր յարգանքը դրսեւորեց մեր ազգային ինքնիշխանութեան եւ իրաւունքի նկատմամբ՝ վարելու այն

արտաքին քաղաքականութիւնը, որ մենք ենք ուզում: Նա չմիջամտեց եւ չխանգարեց մեր յեղափոխութեանը, երբ ես դեռ ընդդիմադիր գործիչ էի: Նա չի միջամտում նաեւ այժմ՝ իմ վարչապետութեան ժամանակ: Մեր յարաբերութիւնները հիմնուած են փոխադարձ յարգանքի վրայ:

- Կարո՞ղ է արդեօք թաւշեայ յեղափոխութիւնը վարակիչ ազդեցութիւն ունենալ նախկին խորհրդային տարածքում:

- Հայաստանում տեղի ունեցածն առանձնապատուկ էրեւոյթ էր: Իւրաքանչիւր պետութիւն ունի իր ինդիւններն ու սեփական իրաւունքները: Անհար է մի երկրի օրինակն արհեստականօրէն տարածել միւսների վրայ:

- Ինչպէ՞ս էք պատրաստուում յաղթահարել դիւանագիտական փակուղին, որում յայտնուել է Հայաստանն Ատրպէյճանի հետ՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան հարցում:

- Դիտարկենք իրականութիւնն այնպէս, ինչպէս կայ. ատրպէյճանական իշխանութիւններն ուզում են տպաւորութիւն ստեղծել, իբրեւ թէ Լեռնային Ղարաբաղը պէտք է լինի Ատրպէյճանի կազմում: Բայց նրանք ուզում են հասնել այդ նպատակին՝ առանց Լեռնային Ղարաբաղի իշխանութիւնների հետ բանակցելու: Ես լաւ չեմ հասկանում, թէ որն է Ատրպէյճանի այն տրամաբանութիւնը, ըստ որի նա ուզում է առանց Լեռնային Ղարաբաղի հետ խօսելու՝ լինել նրա հետ միեւնոյն պետութեան կազմում: Ատրպէյճանն այստեղ ինչն իրեն հակասում է: Եթէ Պաքուն ուզում է լինել նոյն պետութեան մէջ, ինչ Լեռնային Ղարաբաղը, ապա պէտք է շահագրգռուած լինի ժամ առաջ նրա հետ բանակցութիւններ վարել: Կամ գուցէ՞ Պաքուն ուզում է ստանալ Լեռնային Ղարաբաղը՝ առանց այնտեղ ապրող բնակչութեան: Սա կը նշանակի, որ Ատրպէյճանն ուզում է քշել կամ ոչնչ-

չացնել Լեռնային Ղարաբաղի բնակչութեանը: Պաքուն պատրաստուած է նոր ցեղասպանութիւն իրականացնել հայերի դէմ Լեռնային Ղարաբաղում: Եթէ դա այդպէս է, ապա Ղարաբաղի բնակչութիւնն իրաւացի է, երբ պնդում է, որ հայերը չեն կարող ապրել նոյն պետութեան կազմում, ինչ Ատրպէյճանը: Քանի որ այդ պարագայում Ատրպէյճանի կազմում լինելն իրենից ներկայացնում է սպառնալիք Լեռնային Ղարաբաղի ցանկացած քաղաքացու համար:

- Ֆրանկոֆոնիայի մօտալուտ գազաթափողովի նախապատրաստական շրջանակներում դուք հանդիպել էք նախագահ Մակրոնին: Ինչ էք ակնկալում այդ գազաթափողից, որը դիւանագիտական ամենակարեւոր իրադարձութիւնն է՝ 1991 թուականին Անկախութեան հռչակումից ի վեր:

- Ինչ վերաբերում է գազաթափողին, ապա մենք ակնկալում ենք, որ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպութիւնն այդ իրադարձութիւնից դուրս կը գայ աւելի հզօրացած: Եւ որպէս գազաթափող վերաբերուած հիւրընկալող երկիր՝ մենք մեր պարտքն ենք համարում ամէն ինչ անել դրա համար:

Իսկ ինչ վերաբերում է Ֆրանսայի նախագահի սպասուող պետական այցին՝ մենք ակնկալում ենք, որ հայ-ֆրանսական յարաբերութիւնները կը բարձրանան նոր աստիճանի, յատկապէս երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական կապերի ընդլայնմամբ, Ֆրանսայի կողմից Հայաստանում կատարուող ներդրումների քանակի աւելացմամբ, երկու երկրների աւելի սերտ համագործակցութեամբ՝ միջազգային հարթակներում, ինչպէս նաեւ միջազգային ու տարածաշրջանային անվտանգութեան հարցերում: Նախագահ Մակրոնի հետ հանդիպումն ինձ տուեց լաւ հիմքեր համոզուած լինելու, որ մենք ճիշտ ուղու վրայ ենք:

## Քոչարեան Վարձած է

Շարունակուած էջ 1-էն  
Թիւնները խորագրած է՝ «Ժողովրդավարութիւնը եւ օրէնքը Հայաստանի մէջ. Ի՞նչ պէտք քանակի նախագահ Մաքրոն վարչապետին հետ եւ «Հայաստանի «Ութըր-

[www.massispost.com](http://www.massispost.com)



**MARONIAN**  
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

CA Insurance Lic. #0C99815



**WELCOME HOME & AUTO INSURANCE**  
Along with all of our other *Trusted Insurance Services*



We will shop you with over 20 A-rated companies to find the best fit for your needs and budget.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE  
**(818) 500 9305**



# Վահրամ Տեփանոսեանը Յայտարարած է՝ Որդիին Սպանած են Ոչ Թէ ՊՊԾ Գուճըր Գրաւած Խուճքի Անդամները, Այլ Ոստիկանները

Պարեկապահակային ծառայութեան (ՊՊԾ) գունդի գրաւման 13-րդ օրը՝ 2016 թուականի 30 Յուլիսին սպաննուած 30-ամեայ ոստիկան Եուրի Տեփանոսեանի հայրը՝ Վահրամ Տեփանոսեանը յայտարարեց է՝ որդիին սպանած են ոչ թէ Պարեկապահակային ծառայութեան (ՊՊԾ) գունդը գրաւած խումբի անդամները, այլ ոստիկանները:

«Միանշանակ այո, սպանել են ոստիկանները: Ինչ ասել եմ, իմ ասածին տէր եմ, երկրորդ միտք չի կարայ լինի», - Panorama.am-ի հետ զրոյցի ժամանակ ըսաւ Տեփանոսեանը:



կրծքավանդակի ետին մակերեսին, այն պատճառով և սուր եզր ունեցող կոշիկ առարկայով՝ անոր կենդանութեան օրօք՝ մահէն անմիջապէս առաջ:

Ոստիկանութեան աշխատակից Եուրի Տեփանոսեանի սպանութեան համար մեղադրանք առաջադրուած է «Մասնայ ծեղր» խմբաւորման անդամ Սմբատ Բարսեղեանին:

Ծառայողական պարտականութիւնները կատարելու ժամանակ ցուցաբերած անձնական խիզախութեան եւ նուիրումին համար Եուրի Տեփանոսեանը 2016-ին ՀՀ նախագահի հրամանագրով յետմահու պարգևատրուած է «Հասարակական կարգի պահպանող պահակախումբի համար» մետալով, իսկ ՀՀ ոստիկանութեան պետի հրամանով անոր յետմահու շնորհուած է հարիւրամետր սպայական կոչում եւ պարգևատրուած է «Իրաւակարգի ամրապնդման համար» մետալով:

2016-ի Դեկտեմբերին՝ Երեւանի քաղաքապետարանն անհատոց սեփականութեան իրաւունքով բնակարաններ յատկացուցած է գոհուած ոստիկաններ Գագիկ Մկրտչեանի եւ Եուրի Տեփանոսեանի ընտանիքներուն:

Հարցին, թէ ինչու այդ մասին կը յայտարարէ դէպքէն երկու տարի անց, ան պատասխանեց. «Օրէնքները փոխուել են, հիմա նոր խօսուած եմ, քննարկել լրիւ ուրիշ օրէնք էր, հիմա՝ ուրիշ: Իմ համար օրէնքը իշխանութիւնն է, քննարկելու ուրիշն էր, հիմա ուրիշ է»:

Լրագրողի այն հարցին, թէ ակելի վաղ իրեն ստիպե՞ր են լռել, պատասխանած է. «Ես յաջորդ դատին ելոյթ կ'ունենամ դատարանում, ամէն ինչ կ'ասեմ»:

Յիշեցնենք, որ այս տարուայ 28 Մարտին հրապարակուած են Պարեկապահակային ծառայութեան (ՊՊԾ) գունդի գրաւման ժամանակ սպաննուած ոստիկաններու դիակներու փորձաքննութեան արդիւնքները: Անոնց համաձայն, Եուրի Տեփանոսեանի մահուան պատճառ դարձած է ողնուղեղի դիֆուզ վնասուած քային ախտահարումը՝ ողնաշարի պարանոցային հատուածի եւ գանկի դիմացին հատուածի համակցուած հրազէնային, գնդակային, կոշիկ վիրաւորում ստանալու հետեւանքով, որն անմիջական կապի մէջ եղած է մահուան հետ: Տեփանոսեանի մարմնի վրայ յայտնաբերուած է նաեւ սալջարդ՝

## Յարութիւն Մարութեան Ընտրուած է Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Յիմնարկի Տնօրէն



Հայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի հոգաբարձուներու խորհուրդը Սեպտեմբեր 14-ին, փակ, գաղտնի քուէարկութեամբ թանգարանի տնօրէն ընտրեց ազգագրագէտ Յարութիւն Մարութեանը:

Ներկայացուած 4 թեկնածուներէն 2-ին՝ Արմէն Ասրեանին եւ Ստեփան Ստեփանեանցին օգտին ոչ ոք չէր քուէարկած, Հայկ Դեմոյեանի օգտին քուէարկած էր 2 հոգի, իսկ պատմական գիտութիւններու դոկտոր Յարութիւն Մարութեանն ընտրուած է 11 կողմ ձայներով:

Յարութիւն Մարութեանը գիտութեան ոլորտէն ներս 34 տարուան աշխատանքային փորձառութիւն ունի, իսկ վերջին երկու տարիներուն ԳԱԱ արդիականութեան, ազգաբանութեան բաժնի գլխաւոր գիտաշխատողի պաշտօնակատարն է, հեղինակ է 100-է ակելի գիտական աշխատանքներու, այդ շարքին՝ ցեղասպանութեան թեմայով: 2011-ին արժանացած է նաեւ ՀՀ նախագահի մրցանակի՝ ցեղասպանութեան բնագաւառէն ներս աշխատանքներ իր ականացնելու համար:



## Գահիրէի մէջ Աւարտին կը Մօտենան Հայկական Գերեզմանոցի Վերականգնման Աշխատանքները

Եգիպտոսի մայրաքաղաք Գահիրէի մէջ աւարտին կը մօտենան հայկական գերեզմանոցի վերականգնման աշխատանքները: Այս մասին գրած է Reuters գործակալութիւնը «Վերականգնուած գերեզմանոցը ցոյց կու տայ Գահիրէի մէջ հայերու պատմութիւնը» խորագիրով յօդուածի մը մէջ:

Գերեզմանոցը կ'արտացոլէ Գահիրէի մէջ հայկական համայնքին պատմութիւնը: Աշխատողները արդէն ամրացուցած են եւ մաքրած են գերեզմանաքարերը, տեղադրուած կիսանդրիները:

Պատերազմասէրներ կը փչեն ատելութեան կրակը ամէն տեղ, եւ Ամերիկայի բազուկը բարձրացուցած ամէնքին դէմ մարտահրաւիրներ կը կարդան, մէկ տեղ դեսպանատուն փոխադրելով (Երուսաղէմ), ուրիշ տեղ դասեր տալով (Քորէա), եւ շատ մը տեղեր ալ համաձայնութիւն պատուելով (Իրան) կամ անընդունելի մաքսազիններ (tariffs) պարտադրելով (Եւրոպա, Գանատա եւ Մեքսիքա): Ճշմարտութիւնը խափանելու ամէնէն ցայտուն օրինակը եղաւ վերջերս ամերիկացի ծերակուտականներու կողմէ հարցաքննուող դատաւոր Պրէթ Բավանայի (Brett Kavanaugh) որպէս Ամերիկայի Բարձրագոյն Ատենի թեկնածութիւնը (Supreme Court nominee), երբ բազմահազար վաւերագրային փաստաթուղթեր չհրապարակուեցան եւ չմատուցուեցան զինք հարցաքննող ծերակուտականներուն, քողարկելու համար անոր ունեցած անցեալի դիրքորոշումները խիստ կարեւոր նիւթերու մասին: Եւ ամէնէն աւելի յատկանշական պարագան այդ հարցաքննութեան, եղաւ դատաւորին կողմէ եղած խուսափողական պատասխանները դրուած հարցումներուն: Հոս ալ ճշմարտութիւնը խաչուեցաւ զինք պաշտպան հանդիսանալու նուիրուածութեան ծառայելու երդուեալին կողմէ, երբ ան, այսինքն այդ դատաւորը, սուտ խօսեցաւ չպատասխանելով հարցումի մը, որ յստակ ոչ կամ այդ պատասխան կը պահանջէր ծերակուտականի մը ըրած հարցումին: Այդ հարցումը հետեւեալն էր. «Տեղաձայնով երբեք խօսա՞ծ էր փաստաբանական գրասենեակին հետ, ուր կը գործէր նախազանգար Տանը թրամփի փաստաբաններէն մէկը»: Այս հարցումին յստակ պատասխան մը չտուաւ այդ դատաւորը եւ իր խուսափողական կեցուածքով ոտնակոխեց ճշմարտութիւնը: Ըսինք, որ օրինազանցութիւնը կը կիրարկուի ամէնէն շատ անոնց կողմէ, որոնք օրէնքի անունով եւ անով զինուած իշխանութեան կը հասնին: Բազմաչարչար ճշմարտութիւնը եղած է միշտ գոհը անոնց, որոնք օրէնքը շրջանցելով ամէն ինչ կը ծառայեցնեն իրենց շահը հետապնդելու եւ դիրքը ամրապնդելու համար: Այդպիսիները, դուրս գալով անագնիւ եւ շահախնդիր մարդոց շարքերէն, յաճախ բարոյագիտութեան մասին կը խօսին եւ ազնիւ ըլլալ կը դաւանին: Այդպիսիները կը չիշեցնեն խօսքը անոր, որ կ'ըսէ, «ցաւալի է, որ նոյն ջուրն են խմում եւ նույն հացը ուտում, սրիկաները եւ ազնիւ մարդիկ»:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ**  
 ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԳԱՄԱՐ)  
 ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԳԱՄԱՐ  
 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
 ՍԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՆՆԵՐ՝  
 ԴԵՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680



# Ուշագրաւ Համերգների եւ Դասախօսութիւնների Շարքը Հայկական Երաժշտութիւնը Հասցրեց Ասիա՝ Կամրջելով Դարաւոր Ժողովրդական Աւանդոյթները



Երաժշտութիւնն իրաւամբ գե-  
րագոյն համամարդկային լեզուն է,  
որն ի չիք է դարձնում աշխարհագ-  
րական հեռաւորութիւններն եւ մեր-  
ձեցնում մշակոյթները: Այս ամառ  
հայկական եւ ասիական ժողովր-  
դական աւանդոյթները ներդաշ-  
նակօրէն միահիւսուեցին՝ Չինաս-  
տանում եւ Ճափոնիայում տեղի  
ունեցած մի շարք համերգների եւ  
ուշագրաւ դասախօսութիւնների  
միջոցով:

Կազմակերպուած լինելով  
ՀԲԸՄ կատարողական արուեստնե-  
րի բաժնի կողմից (ԿԱԲ)՝ այս  
միջոցառումները տարածեցին հայ-

տանն ու Չինաստանը բազմաթիւ  
նմանութիւններ ունեն: Երկու երկր-  
ներն էլ ունեն դարաւոր պատմու-  
թիւն, հսկայական մշակութային  
ժառանգութիւն եւ հրաշալի աւան-  
դական երաժշտութիւն», - ասաց  
համերգի գեղարուեստական ղեկա-  
վար Աստղիկ Պօղոսեանը, ով նաեւ  
Շանհայի սիմֆոնիկ նուագախմբի  
նախագահի օգնականն է: «Կարելոր  
է, որ մենք շարունակենք առաջ  
տանել եւ ներկայացնել մեր մշա-  
կոյթը այլ երկրներում, որովհետեւ  
հայկական մշակոյթն առաջարկե-  
լու այնքան բան ունի, եւ մենք  
պէտք է անենք ամէն ինչ, որ այն



կական մշակոյթը Հեռաւոր Արեւել-  
քում եւ իսթանբուլի մշակութային  
համագործակցութիւնը: «Այս  
շրջագայութիւնը հայկական ժա-  
ռանգութիւնը համաշխարհային  
լարանին հասցնելու եւ նոր ծագող  
տաղանդներին աջակցելու մեր  
առաքելութեան եւս մէկ դրսեւորում  
էր», - ասաց դաշնակահար եւ  
ՀԲԸՄ ԿԱԲ տնօրէն Հայկ Արսեն-  
եանը:

Համերգների ու դասախօսու-  
թիւնների շարքը մեկնարկեց Մա-  
յիսի 28-ին Չինաստանի Շանհայ  
քաղաքում ՀԲԸՄ եւ Cadillac Shang-  
hai համերգասրահի կողմից հիւ-  
րընկալուած համերգով՝ լեփեցուն  
դահլիճում: «Մետաքսի ճանապար-  
հի հնչիւնները. Հայաստանից մինչեւ  
Չինաստան» խորագիրը խոսում  
էր չին-հայկական կապերի հու-  
թեան մասին, որոնք գալիս են  
միջնադարից, երբ Մետաքսի ճա-  
նապարհը գարկ տուեց երկու ազ-  
գերի միջեւ առեւտրին: «Տարի-  
ներ շարունակ ապրելով Շանհայ-  
յում՝ ես հասկացել եմ, որ Հայաս-

տանն ինչ հնարաւորինս մեծ  
թուով մարդկանց: Յուսով եմ,  
մենք դա Ասիայում անելու ավելի  
շատ հնարաւորութիւններ կ'ունե-  
անք»:

Հայաստանը, Չինաստանը,  
Ֆրանսան, Ինդոնեզիան, Մալայի-  
ան եւ Միացեալ Նահանգները ներ-  
կայացնող երաժիշտները կատարե-  
ցին մի իւրօրինակ ծրագիր՝ միա-  
ձուլելով հայկական եւ չինական  
ժողովրդական մեղեդիները, որոնք  
կատարուեցին կամ որպէս առան-  
ձին հատուածներ կամ որպէս միք-  
սեր՝ արեւմտեան դասական կամ  
աւանդական չինական երաժշտա-  
կան գործիքներով: «Առաջին ան-  
գամ է, որ աւանդական չինական  
գործիքով այլ երկրի ժողովրդա-  
կան երաժշտութիւն եմ նուագում»,  
- ասաց գուժեկահար Լիու Յու  
Քսիանը: «Ես շատ երջանիկ եմ եւ  
հպարտ նման հնարաւորութիւն ու-  
նենալու եւ այս մշակոյթին ծանօ-  
թանալու համար»:

# Մեծ Շուքով Նշուեցաւ Ռուճանիոյ Կալաց Քաղաքի Ս. Աստուածածին Հայոց Եկեղեցւոյ 160-ամեակը




Սեպտեմբեր 9-ին Ռուճանիոյ-  
Կալաց քաղաքի Ս. Աստուածածին  
եկեղեցին մարդաշատ էր: Ռուճան-  
իոյ տարբեր քաղաքներէն այստեղ  
հաւաքուած էին հայ համայնքի եւ  
ուրուսաւորացի միութեան ներկա-  
յացուցիչներ եւ ուխտաւորներ:

Ինչպէս «Հայերն այսօր»-ին  
կը յայտնեն Ռուճանիոյ Հայոց  
թեմի մամլոյ դիւանէն, առիթը  
մէկն էր՝ մեծ շուքով տօնախմբելու  
Ս. Աստուածածին եկեղեցւոյ 160-  
ամեակը: Տօնական սուրբ Պատա-  
րագ կը մատուցէ թեմակալ առաջ-  
նորդ գերաշնորհ Տ. Տաթեւ եպիս-  
կոպոս Յակոբեան, որուն իր պատ-  
գամը կը բերէ ներկայ ժողովուր-  
դին՝ մասնաւորապէս նշելով. «Ու-  
րախութեան, բերկրանքի ու ցնծու-  
թեան մէջ են բոլորիս հոգիները,  
քանզի շուրջ 160 տարիներ առաջ  
մեր նախնիները Կալաց քաղաքին  
մէջ վեր խոյացուցած են հրաշա-  
կերտ մէկ եկեղեցի, որ կը կրէ Ս.  
Մարիամ Աստուածամօր անունը:  
Կալացի Ս. Աստուածածին եկեղե-  
ցին կառուցուած է 1858թ., գերմա-  
նացի ճարտարապետ Հերման Մաս-  
քէի նախագիծով: Խորհրդային տա-  
րիներուն թէեւ բազմիցս փորձ  
եղած է քանդել Կալացի հայոց  
եկեղեցին, սակայն թեմակալ Առաջ-  
նորդ երջանկալիշատակ գերշ. Տ.  
Տիրայր արք. Մարտիկեանի մի-  
ջամտութեան եւ պաշարի շնոր-  
հիւ եկեղեցին մնացած է կանգուն՝  
շարունակելով բաց պահել իր դռնե-  
րը հաւատացելոց առջեւ մինչեւ  
այսօր: 2008 թ. բարեյիշատակ  
առաջնորդի գլխաւորութեամբ  
հանդիսաւորապէս նշուած է եկե-  
ղեցւոյ հիմնադրման 150-րդ տա-  
րեդարձը: Յօբելանի առթիւ նո-  
րոգուած ու բարեկարգուած է եկե-  
ղեցին: Եւ ահա այսօր, շուրջ 10  
տարի անց, դարձեալ կ'ազդարա-  
րենք, որ հայոց եկեղեցին կանգուն  
է եւ կը շարունակէ իր հիւրընկալ  
դռները բանալ բոլոր հաւատացե-  
լոց առջեւ: Դեռեւս 1700 տարիներ

առաջ, երբ քրիստոնէութիւնը ըն-  
դունեցինք որպէս պետական կրօն,  
անխախտ ուխտ կապեցինք Աստու-  
ծոյ հետ եւ դարերու փորձութիւն-  
ներու մէջ հաւատարիմ մնացինք  
մեր այդ սրբազան ուխտին: Ոչինչ  
կրցաւ այս ուխտէն մեզի շարժել՝ ոչ  
արհաւիրք, ոչ հուր եւ ոչ սուր, ոչ  
թշնամիին կողմէ գործադրուած  
որեւէ բռնութիւն, անգամ նախորդ  
դարասկիզբին մեր ժողովուրդին  
հանդէպ իրականացուած ցեղաս-  
պանութիւնը, խորհրդային անասո-  
ւածութիւնը եւ ստալինեան  
բռնաճնշումները: Սիրելիներ, մեր  
յորդորն ու պատգամն է ձեզ, որ  
ամէն ջանք գործադրէք Ռուճանա-  
հայ գաղութի գորացման համար,  
ձեր ստեղծագործ աշխատանքով  
աւելցնէք հայու նուիրական անուան  
պատիւն այս քաղաքին եւ այս  
երկրին մէջ առհասարակ, շարունա-  
կողը ըլլաք այն մեծ գործին, որ  
ժառանգած էք ձեր հայրերէն, որ-  
պէսզի Հայ Եկեղեցին դառնայ այն  
նուիրական վայրը, այն կեդրոնը,  
ուր ամէն հայորդի պիտի գտնէ իր  
հոգիի մխիթարութիւնն ու երջան-  
կութիւնը, ինչպէս այսօր: Համա-  
խումբ մնացէք մեր Սուրբ Եկեղեցւոյ  
յարկի ներքոյ, որպէսզի եկեղեցւոյ  
Սուրբ Խորանէն ճառագող լոյսը  
միշտ լուսաւորէ ձեր կեանքի ճանա-  
պարհը, ձեր ընթացքը, ձեր գործերը  
դէպի բարին ու ազնիւը, դէպի  
արդարն ու գեղեցիկը, եւ դուք  
շարունակ սէր ու եղբայրութիւն  
վայելէք այս հողին վրայ՝ միշտ  
հաւատարիմ քրիստոնէայ մեր ժո-  
ղովուրդի ստեղծարար նկարագրին»:

Կալացի Ս. Աստուածածին եկե-  
ղեցւոյ 160-ամեայ յօբելանի առի-  
թով հրատարակութեան պատրաստ-  
ուած էր տեղի հայ համայնքի ու  
եկեղեցւոյ պատմութիւնը ներկա-  
յացնող գրքոյկ: Այսօր թէեւ տեղի  
հայ համայնքը փոքրաթիւ է, բայց  
կը շարունակէ ապրիլ հայու ոգով,  
հայկական աւանդութիւններու պահ-  
պանմամբ ու շարունակմամբ:



NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC

**Garine Depoyan**

626-755-4773  
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
ghdepoyan@gmail.com



### Վիկտոր Համբարձումեանի 110-ամեակին Նուիրուած Միջազգային Գիտաժողով



ՀՀ գիտութիւնների ազգային ակադեմիայում այսօր տեղի է ունեցել Վիկտոր Համբարձումեանի 110-ամեակին նուիրուած «անկախուն երեւոյթներ եւ տիեզերքի առաջացում» խորագրով միջազգային գիտաժողովի բացման արարողութիւնը, որին մասնակցել է աշխարհի 16 երկրի 67 գիտնական: Գիտաժողովի մասնակիցներին ողջունել են ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարար Արայիկ Յարութիւնեանը, անվտանգութեան խորհրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը, ՀՀ ԳԱԱ նախագահութեան ներկայացուցիչներ: Այս մասին տեղեկանում ենք կԳՆ-ից:

«Միջազգային գիտաժողովները մեզ համար շատ կարեւոր են՝ փորձի փոխանակման, բնորոշել ներառելու եւ ներկայացնելու առումով: Եւ այն միջոցառումը, որ նախատեսուած է առաջիկայ օրերին՝ կապուած Վիկտոր Համբարձումեանի անունին հետ, կրկնակի պարտաւորեցնող է: Մեծ գիտնականի անունը յաճախ ենք լսում արտասահմանեան ոչ միայն մասնաշրջանային, այլ նաեւ հումանիտար ոլորտի համաժողովների ընթացքում, որովհետեւ նրան մեր սահմաններից դուրս շատերն են ծանաչում: Եւ պատահական չէ, որ Վիկտոր Համբարձումեանի ծննդեան օրը՝ Սեպտեմբերի 18-ը, 1996 թուականից հռչակուած է որպէս աստղաֆիզիկայի օր», - նշել է նախարարը՝ ընդգծելով, որ այս փաստը եւս շեշտում է այն դերը, որ Վիկտոր Համբարձումեանն ունեցել է մեր պետութեան եւ գիտութեան կեանքում: «Գիտութեամբ զբաղուելը քաղաքականութեան նման մի բան է. եթէ դու ցանկանում ես առաջընթաց եւ յայտնագործութիւններ ունենալ, ապա պէտք է խիզախութիւն դրսեւորես: Մեր բոլոր գիտնականները, որոնք նշանակալի ներդրում են ունեցել գի-

տութեան մէջ, ունեցել են այդ խիզախութիւնը: Համբարձումեանը դրանով եւս աչքի է ընկել: Ես գիտեմ, որ խՍՀՄ-ի համար ծանր տարիներին՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, մեծ գիտնականը շարունակել է գործել, եւ սա լաւագոյն օրինակն է այն փաստի, որ պետութեան սոցիալական պայմաններն ամենեւին էլ չեն կարող խոչընդոտ հանդիսանալ՝ գիտութեամբ զբաղուելու, մեծ յայտնագործութիւններ անելու համար: Սա ամենեւին չի նշանակում, որ պետութիւնը պէտք է հոգ չտանի գիտութեան համար, բայց այս համադրումը պէտք է անպայման ունենանք: Վերջերս մի հրապարակում էի կարդում այն մասին, երբ խորհրդային զօրքերը մտել էին Չեխոսլովակիա, եւ աշխարհում խորհրդային որեւէ ներկայացուցչի սուլոյցներով էին դիմաւորում, Վիկտոր Համբարձումեանի դասախոսութիւններն ուղեկցիները քար լուծեամբ էին լսում, ինչը եւս խօսում է նրա մեծութեան մասին: Վերջինիս մասին է խօսում նաեւ այն փաստը, որ իր մրցանակի նկատմամբ հետաքրքրութիւնը գնալով մեծանում է: Առաջիկայում պէտք է ջանքեր գործադրենք՝ աւելի մեծ թուով մասնակիցներներ գրաւելու եւ մրցանակը հանրայնացնելու համար», - նշել է Արայիկ Յարութիւնեանը՝ գիտաժողովի մասնակիցներին մղելով արդիւնաւէտ քննարկում:

Գիտաժողովը կազմակերպել են՝ ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումեանի անունին Բիւրակների Աստղադիտարանը, ՀՀ գիտութիւնների ազգային ակադեմիան, միջազգային աստղադիտական միութեան հարաւ-արեւմտեան ու կեդրոնական ասիայի տարածաշրջանային աստղադիտական կեդրոնը եւ հայկական աստղադիտական ընկերութիւնը:

### Կոմիտասի Ծննդեան 150-ամեայ Յօբելեանին Ընդառաջ Մեկնարկեց Միջազգային Ֆորումը



Կոմիտաս Վարդապետի ծննդեան 150-ամեայ յօբելեանին ընդառաջ Եւրոպական մշակութային տարուաշրջանակում՝ Կոմիտասի թանգարան-ինստիտուտ մեկնարկեց «Միջ-մշակութային երկխոսութիւն. երաժշտական կրթութեան ուղիներ» միջազգային ֆորումը: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տնօրէն Նիկոլայ Կոստանդեանն աջակցութեան համար շնորհակալութիւն յայտնեց Հայաստանում Եւրամիութեան պատուիրակութեանը, Հայաստանում Ֆրանսայի, Իտալիայի, Լեհաստանի, Գերմանիայի դեսպանութիւններին, Լեհաստանի մշակույթի նախարարութեանն ու Երեւանի Գիտթէ կենտրոնին: «Այսօր մեզ համար կարեւոր է հաղորդակից լինել Եւրոպական իրականութեան մէջ երաժշտական կրթութեան խնդիրների լուծմանը, կրթական համակարգի շտկմանն ու հեռանկարային նոր սկզբունքների ձեւաւորմանը:

Կարծում ենք, որ այս ձեռնարկը կը նպաստի դրան», - ասաց նա: ՀՀ մշակույթի փոխնախարար Տիգրան Գալստեանի խօսքով՝ համաժողովը լաւ հարթակ կը հանդիսանայ փորձի փոխանակման համար: «Սա սերտ կապերի եւ մշակութային երկխօսութեանն ուղղուած համաժողով է», - ասաց Գալստեանը՝ ֆորումի մասնակիցներին մղելով արդիւնաւէտ եւ կառուցողական աշխատանք:

«Միջմշակութային երկխօսութիւն. երաժշտական կրթութեան ուղիներ» միջազգային ֆորումն իր աշխատանքները կշարունակի մինչեւ Սեպտեմբերի 15-ը: Ֆորումի նպատակն է մէկ յարկի տակ հաւաքել եւրոպական տարբեր երկրների երաժշտագետների՝ հայ մասնագետների հետ ընդհանուր հարթակում քննարկելու երաժշտական կրթութեան տարբեր մօտեցումները, փորձի փոխանակում կազմակերպելու դասախօսութիւնների միջոցով:

կոնստրուկտոր, դոցենտ, Տ.Գ.Թ. Ա. Արզումանեանը նիստի մասնակիցներին ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի նորոգման եւ մասնակի ամրակայման կատարուած աշխատանքների ընթացքում ի յայտ եկած նոր

տրուկտիւ համակարգի վերականգնման առաջարկութիւնները: Քննարկումների արդիւնքում ձարտարապետական խորհուրդը, հիմք ընդունելով Մայր Տաճարի նորոգման եւ մասնակի ամրակայման աշխատանքների ընթացքում



հանգամանքներն ու խնդիրները եւ դրանցից բխող նախագծային լրամշակումներն ու առաջարկները: Նորհուրդը մասնաւոր քննութեան առաւ Մայր Տաճարի ներքին կոնստրուկցիաների ամրացումների ընթացքում առաջացած խնդիրների լուծումների, հարաւային զանգակատան հետազօտական աշխատանքների արդիւնքների հիման վրայ յենարանային մասի կոնստրուկցիաների ամրացումների եւ արեւելեան զանգակատան կոնս-

կատարուած հետազօտական եւ լրամշակուած նախագծային հիմնական լուծումները, եւ, հաշուի առնելով տաճարի բացառիկ հոգեւոր եւ պատմամշակութային արժէքը, հեղինակային խմբին թելադրեց կոնստրուկտիւ միջամտութիւնների պարագայում հնարաւորինս զերծ մնալ կառուցիչ առաւելագոյն ամրացմանը միտուող էական կոնստրուկտիւ փոփոխութիւններից եւ պահպանել քարէ կոնստրուկցիաների աւանդական աշխատանքային սկզբունքը:

### Մայր Աթոռի ճարտարապետական խորհրդի Նիստում Քննարկուեց Մայր Տաճարի Հիմնանորոգութեան Ընթացքը

Սեպտեմբերի 14-ին, տեղի ունեցաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետական խորհրդի նիստ, որին քննարկուեց Մայր Տաճարի ամրակայման եւ հիմնանորոգութեան աշխատանքների ընթացքը: Ողջունելով ճարտարապետական խորհրդի անդամներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. իր շնորհակալութիւնը յայտնեց Միածնաէջ Տաճարի

նորոգման աշխատանքների ընթացքի եւ առկա խնդիրների վերաբերեալ մասնագիտական քննարկման նպատակով նիստին մասնակցելու հրաւերին ընդառաջելու համար: Նորին Սրբութիւնը գնահատանքով ընդգծեց այս ընթացքում համայն հայութեան Սրբութիւն Սրբոցի նկատմամբ ճարտարապետների եւ շինարարների մասնաւոր ուշադրութիւնը: Ժողովին նախագծի գլխաւոր



### Շանլեան Թաթևեան Վարժարանի Տարեկան Եօթներորդ Ճաշկերոյթ-Պարահանդէսը Կլէմտէյլի Մէջ

Շաբաթ Հոկտեմբեր 13, Երեկոյեան ժամը 7ին Կլէմտէյլի Ֆիլիսիա ճաշարանին մէջ, տեղի պիտի ունենայ Լիբանանի Հայ Աւետարանական Շանլեան-Թաթևեան Երկրորդական Վարժարանի շրջանաւարտից Միութեան տարեկան եօթներորդ ճաշկերոյթ-պարահանդէսը:

Վարժարանին շրջանաւարտներուն, նախկին ուսուցիչներուն, բարեկամներուն եւ բարերարներուն ներկայութիւնն ու քաջալերանքը մեծապէս փափաքելի է:

Միութիւնն իր գործունէութեան եօթը տարիներուն ընթացքին, յատկանշական օժանդակութիւն առաքած է վարժարանիս:

Այս ձեռնարկին ընթացքին շրջանաւարտից Միութիւնն ծրագրած է պատուել վարժարանիս վաստակաշատ ուսուցչուհիներ Տկն. Լուսին Մանճէլիքեանը եւ Տկն. Արտեմ Խաչատուրեանը: Տկն. Լուսին Մանճէլիքեանը ութը տարիներ՝ 1961-էն 1969, պաշտօնավարած է որպէս մանկապարտէզի ուսուցչուհի եւ քսան տարիներ որպէս կիրակնօրիայի ուսուցչուհի, տածելով սէր ու գուրգուրանք իր աշակերտներուն հանդէպ: Մեր երկրորդ մեծարեալ ուսուցչուհին՝ Տկն. Արտեմ Խաչատուրեանը, ունի 22 տարիներու ուսուցչական վաստակ, որուն առաջին եօթը տարիներուն՝ 1971-էն 1978 ընթացքին, պաշտօնավարած է նախ որպէս ուսուցչուհի եւ ապա որպէս գործարարական գիտելիքներու բաժանմունքի վարիչ եւ ապա գաղթելով Ամերիկեան Միացեալ Նահանգներ շարունակած է ուսուցչական ասպարէզը Թ.Մ.Մ. Արշակ Տիգրանեան Վարժարանէն ներս, ցուցաբերելով ծով համբերութիւն եւ կատարեալ նուիրում: Ինչպէս նաեւ պիտի պատուուրեն շրջանաւարտից Միութեան նախկին վարչական անդամներէն Տկ. Լիզա Մանոյեան՝ աշխատած 2012-2017, Տկն. Փօլին Պետիկեան՝ աշխատած 2014-2017 եւ Տկն. Վիքի Շահրաշեանը՝ աշխատած 2015-2017, իրենց կատարած սիրայօժար եւ նուիրեալ աշխատանքին



համար մեր միութեան գոյութեան տարիներուն ընթացքին: Ինչպէս միշտ, սոյն ձեռնարկին հասոյթը պիտի յատկացուի վարժարանիս կարօտեալ ընտանիքներու զաւակներուն ուսման կրթաթոշակի ապահովման: Կանխաւ կը զնահատենք եւ մեր երախտագիտութիւնը կը յայտնենք մասնակցողներուն՝ իրենց ներկայութեան եւ օժանդակութեան համար: Երեկոն պիտի խանդավառէ սիրուած երգիչ Մարտիկ Յովհաննիսեանը: Տոմսեր ապահովելու համար հեռ.ձաձայնել հետեւեալ թիւերուն՝ 626-394-7048 եւ 949-903-6111:

### Հայ-ճաբոնական Դիւանագիտական Յարաբերութեանց Տարեդարձը

Շարունակուած էջ 8-էն

ցումներ ունին իրարու նկատմամբ: Ի միջի այլոց, ոեւէ մէկը գիտէ, թէ քանի՞ հայեր կ'ապրին ճաբոնի մէջ: Պատասխանը՝ 60 է: Իսկ Հայաստանի մէջ ապրող ճաբոնցիներու թիւը՝ միայն 30: Ամէն տարի, Հայաստանէն միայն 300 հայեր կ'այցելեն ճաբոն, և շուրջ 2,000 ճաբոնցիներ կ'այցելեն ճաբոնէն՝ Հայաստան: Ի հարկէ, ասիկա մեծ ցուցանիշ մը չէ:

Գալով տնտեսական յարաբերութիւններուն, առեւտրական փոխանակումները միայն 35 միլիոն ամերիկեան տոլար է կողմերուն միջեւ, իսկ ներդրումները՝ շատ քիչ: Հակառակ այս անցանկալի պատկերներուն, ինչ որ պիտի ուզէի ըսել այսօր, այն է, որ ներկայ կայերը ճաբոնի և Հայաստանի միջեւ բաւական լաւ են և կանկած չկայ, որ աւելի պիտի զարգանան ապագային:

Որպէս փայլուն ապացոյց, այս ուղղութեամբ ես պիտի ուզէի ներկայացնել ձեզի երեք վայրեր Հայաստանի մէջ, որոնք կը խորհրդանշեն ճաբոն-Հայաստան լաւ յարաբերութիւնները:

Առաջին վայրը՝ Սաքուրա ծառերն են, որոնք Ազգային Ժողովի շէնքին առաջամասին գտնուող պարտէզին մէջ են: Այդ ծառերը տնկուած են երեք տարի առաջ՝ Հայաստան-ճաբոն Խորհրդարանական Բարեկամութեան խմբակին և իմ բարեկամ, Հայաստանի մօտ ճաբոնի նախկին դեսպան Հարատայի կողմէ:

Երկրորդ տեղը գոր կ'ուզեմ ներկայացնել, Ջերմ-Էլեկտրոնի կայարանն է: Սոյն Ջերմակայանը կառուցուած է ճաբոնի կողմէ կատարուած 250 միլիոն ամերիկեան տոլարի փոխատուութեան շնորհիւ: Այս Ջերմակայանը Էլեկտրակառուցութիւն կ'արտադրէ 2010-էն ի վեր, և ներկայիս կը մատակարարէ Հայաստանի Էլեկտրակառուցութեան 17%ը:

Գործակցութեան ուրիշ լաւ օրինակ են՝ Երեւան քաղաքին մէջ գործող 28 հրշէջ մեքենաները: Ասոնք շնորհաբաշխուած են ճաբոնական կառավարութեան կողմէ: Յաջորդ տարուան ամրան, 39 ուրիշ հրշէջ մեքենաներ պիտի հայթայթուին շրջանային գլխաւոր քաղաքներուն: Վերջապէս, երրորդ տեղը գոր պիտի ուզէի յանձնարարել ձեզի՝ Սպիտակի «Երկրաշարժի Յիշատակի Այգին» է:

2012-ին, ի յիշատակ Արեւելեան ճաբոնի մէջ տեղի ունեցած մեծ երկրաշարժի զոհերուն կանգնեցուած «Խաչքար» յուշարձանը «Յիշատակի Այգի»ին մէջ, Սպիտակի քաղաքացիներուն նախաձեռնութիւնն էր, որոնք այցելեցին ճաբոն:

Ես երբ տեսայ յուշարձանը, իսկապէս խորապէս ազդուեցայ ի տես հայ ժողովուրդի սրտէն բխող ջերմ զգացումներուն: Ես կը կարծեմ, որ Հայաստանը միակ երկիրն է աշխարհի մէջ ուր կանգնեցուած է յիշատակի կոթող, նուիրուած 2011-ի երկրաշարժի զոհերուն:

Իրականութեան մէջ, Դեկտեմբեր 7, 1988-ի Սպիտակի երկրաշարժի լուրը ցնցիչ եղաւ ճաբոնի մէջ:

ճաբոնական կառավարութիւնը, մեր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով որոշեց շուտափոյթ օգնութեան շոկատ առաքել:

Աւելին, 2011-ին, Արեւելեան ճաբոնի Մեծ Երկրաշարժէն անմիջապէս ետք, Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ տաճարին մէջ զոհերու յիշատակին հոգեհանգիստ մատուցեց Գարեգին Բ. Կաթողիկոսը, մեծ թիւով հայ քաղաքացիներու ներկայութեան: Անոնք բարոյական մեծ օգնութիւն մատուցանեցին ճաբոնցի ժողովուրդին, զոր մենք մեծապէս կը զնահատենք:

Ես կը կարծեմ որ հայ ժողովուրդն ու ճաբոնցի ժողովուրդը կրնան իրար լաւ հասկնալ, որովհետեւ մենք երկրաշարժի միեւնոյն դժուարութիւնները կը դիմակայեցք: Եւ մենք կը հաւատանք, որ երկուքով զգացուած այս փոխադարձ համակրանքը, վստահօրէն, միասնութեան զօրաւոր շղթայ մը կը ստեղծէ մեր երկու ազգերուն միջեւ:

Այո, ես վստահ եմ, որ ճաբոնի և Հայաստանի բարեկամական յարաբերութիւնները պիտի շարունակուին ու աւելի զարգանան ապագային:

Քիչ առաջ ես նշեցի, որ զբօսաշրջիկային հոսքը երկու երկիրներուն միջեւ անբաւարար է: Այսուհանդերձ, անցեալ Սեպտեմբերին, մեր դիւանագիտական փոխյարաբերութիւններու 25-ամեակին առիթով, մեր զոյգ կառավարութիւնները նոր քայլեր առին՝ անցագրային (վիզայի) դրութիւնը ազատականացնելու համար: Արդիւնքը եղաւ շատ նշանակալից: Հայաստանի ճաբոնական դեսպանատան կողմէ շնորհուած անցագրիները զգալի կերպով աւելցան, անցեալ տարուան համեմատութեամբ երեք անգամով: Կը կարծեմ որ ճաբոնցի զբօսաշրջիկներու այցելութիւնը Հայաստան, այս տարի նոյնպէս աւելցած են:

Ես նմանապէս նշեցի, թէ ճաբոնի և Հայաստանի միջեւ փոխադարձ ներդրումները անբաւարար են: Այսուհանդերձ, այս տարի երկու կառավարութիւնները ստորագրեցին փոխադարձ ներդրումներու պաշտպանութեան համաձայնագիր մը: Ասիկա առաջին ներդրումային համաձայնութիւնն է որ ճաբոնը վարեց Կովկասի երեք երկիրներուն միջեւ, և կ'ակնկալուի որ ասիկա պիտի սատարէ ապագայ ներդրումային ընդլայնման: Ես վստահ եմ, որ երկկողմանի տնտեսական յարաբերութիւնները սահուն կերպով պիտի աճին ապագային:

Տիկիները և Պարոններ. Երեք տարուան իմ կեցութիւնը Հայաստանի մէջ ինձի համար եղաւ սքանչելի և առանձնաշատուկ: Ճաբոնը և Հայաստանը ունին համագործակցութեան մեծ կարողականութիւն (potential)՝ իւրաքանչիւր և բոլոր մարզերու մէջ: Ես ուժգնօրէն կը հաւատամ, որ երկկողմանի ազատ յարաբերութիւնները պիտի զարգանան և ես անձնապէս կ'ուզեմ սատարել այդ նպատակի իրագործման ոչ միայն որպէս նախկին դեսպան, այլ նաեւ որպէս բարեկամ Հայաստանի:

Լաւագոյն մաղթանքներս ձեր բոլորին: Շնորհակալութիւն ձեր ուշադրութեան համար:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 125,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State: ----- Zip Code: -----  
Country: -----  
Tel: ----- Email: -----

Ձեր Ծանուցումները Վստահեցէք  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

**www.massisweekly.com**  
**Updated Every Friday**



### Մեղրի Անսովոր Յատկութիւնները

Մեղրի 10 անսովոր յատկութիւն, որոնց մասին գիտենք քիչ եւ ընդհանրապէս չէինք իմանալ:

1) Փոքր վնասուածքները եւ աչքուածքները կարելի է բուժել մեղրի միջոցով, որ կը սպաննէ վարակը եւ կը նուազեցնէ բորբոքումը:

2) Մեղրը կը պաշտպանի կոպիտ հագի դէմ: Քնանալէն առաջ դգալ մը մեղր կերէք եւ հանգիստ պիտի քնանաք:

3) Մեղրը ձեր ամէնօրեայ աննդակարգ ներառելով աւելի առողջ կը դառնաք: Թէեւ մեղրը շատ ջերմութ (calorie) կը պարունակէ, անիկա, սակայն, միաժամանակ կը պարունակէ բազմաթիւ օգտակար նիւթեր:

4) Չոր մաշկի եւ թեփի դէմ օգտակար է մեղրով լոզանքներ ընդունելը: Պարզապէս մեղրը խառնեցէք տաք ջուրի մէջ եւ մաշկի համապատասխան հատուածին քսեցէք, ապա լաւ լուացէք ջուրով:

5) Գիտնականները պարզած են, որ մեղրը դրական ազդեցութիւն կը ձգէ արեան վրայ:

6) Մեղրը կը կանխարգիլէ բշտիկներու յառաջացումը: Պատճառը այն է, որ մեղրը հակաբորբոքային եւ հակա մանրէական



յատկութիւններ ունի: Մեղրով թրջուած բամպակը դրէք մաշկի վնասուած հատուածին եւ ձգեցէք ամբողջ գիշերը:

7) Մեղրը կասիայի հետ միասին կը նուազեցնէ սիրտանոթային հիւանդութիւններով հիւանդանալու հաւանականութիւնը, կ'ամրացնէ անոթները, կ'իջեցնէ քոլեսթերոլի մակարդակը:

8) Մեղրը ուժի հիանալի աղբիւր է:

9) Շատեր կը պնդեն, որ մեղրը կ'օգնէ գերզգայութեան պարագային: Անշուշտ, ասիկա դեռ ասպացուցուած չէ:

10) Մեղրը մարմնին կ'օգնէ առաւել արագ ազատելու ալքոհոլից:

### Ինչո՞ւ Տղամարդիկ Չեն Կրնար Յաղթահարել Յարաբերութիւնները Ուժեղ Կնոջ Հետ

- Ուժեղ կինը կարիք չունի տղամարդու, որ իր փոխարէն պիտի պաշտպանի - Իւրաքանչիւր տղամարդու համար կարեւոր է զգալ, որ ոեւէ մէկուն պէտք է: Անոր համար կարեւոր է նաեւ գիտնալ, որ կնոջ կողմէ յաւերժ սիրոյ եւ իրմով հիանալու պաշար կը մղուի: Ուժեղ կինը կրնայ ցուցադրել ընտրելի հանդէպ սէրը, բայց լիարժէք անկախ մնալ եւ ինքնուրոյն որոշումներ ընդունել: Միայն ուժեղ կինը կրնայ պաշարիլ երկուքի փոխարէն եւ ատիկա ընելու համար ո'չ ոքի կարիքը ունենալ:

- Ուժեղ կինը միշտ գիտէ, թէ ինչ կ'ուզէ - Ուժեղ կանայք գիտեն իրենց բոլոր ցանկութիւններուն եւ անոնց իրականացման հնարա-

ւորութիւններուն մասին: Անոնք չեն մոռնար, թէ ինչի մէջէն անցած են՝ ցանկալիին հասնելու համար: Նման կանայք միշտ գիտեն, թէ ինչ կ'ուզեն: Անոնք կրնան վստահիլ միայն իրենց ուժերուն վստահող տղամարդոց:

- Ուժեղ կինը իրաւունք ունի յարաբերութիւններու մէջ անկեղծութիւն պահանջելու - Տղամարդոց համար հաճելի չէ պատասխաններ գտնել իրենց համար բարդ հարցերուն: Ուժեղ կանանց պատկերացումով տղամարդը պէտք է ըլլայ ազնիւ, բաց, քանի որ անոնց աշխարհին մէջ արդէն իսկ շատ ցաւ կայ: Անոնք կ'ուզեն ինքնավստահութիւն տեսնել իրենց ընտրեալին մէջ: Միայն ուժեղ կանանց չի վախցներ անցեալը:

### Դժուար Սիրոյ Պարզ Կանոններ

- Կոպիտ մի՛ ըլլար - Այստեղ ամէն ինչ շատ պարզ է՝ չվիճիլ անհնար է: Ընտանեկան կեանքը «լի» է գորգին թափած գուլ պաներով, ակռայի դեղի չփակուած տուփերով, անպէտք բաներու վրայ ծախսուած դրամով, առաւօտեան ժամը 4-ին հեռաձայնի անսպասելի զանգերով: Եւ տարօրինակ պիտի ըլլար այդ ամէնը ձայնի բարձր հնչերանգով չըքննարկելը: Սակայն, սահման գոյութիւն ունի խնդիրները քննարկելու անհրաժեշտութեան, զայրոյթը հանդարտեցնելու եւ սատիստական թունաւորման միջոց: Տնային բռնութիւնը մարմնի վրայ կապոյտ հետքեր չի ձգեր, բայց պէտք չէ այդպէս վարուիլ:

- Նոյնիսկ եթէ ճիշդ ես, երբեմն նահանջէ - Նոյնիսկ եթէ դուն մշտապէս ճիշդ ես: Նոյնիսկ եթէ արդէն հազար անգամ ըսած ես, որ ամէն ինչ այդպէս ալ պիտի աւարտի: Միեւնոյնն է՝ նահանջէ՛, ժպտի՛ր եւ ներողութիւն խնդրէ: Որովհետեւ եւս 3 բառ, եւ այլեւս

անհնար պիտի ըլլայ իրավիճակը ուղղել: Ի վերջոյ, մէկն ու մէկը պէտք է աւելի խելացի ըլլայ: Ձեր վէճին պատճառը սկզբունքային չէ. չէ՞ որ գլխաւորը, ըստ էութեան, միայն սէրն է եւ միասին ապրելու ցանկութիւնը:

- Երբեք մի ըսէք՝ «Բայց ես կ'ըսէի» - Դուն կատարեալ ես, բայց եթէ հաշուարկենք այն յիմարութիւնները, զորս թոյլ տուած ես հաշուետու ժամանակաշրջանին՝ պիտի պարզուի, որ անոնք, յամենայն դէպս, աւելի քիչ չեն, քան զուգընկերոջ թոյլ տուածները: Որովհետեւ մենք բոլորս ալ կատարեալ չենք:

- Մի՛ վիրաւորեր անոր ընկերները - Չուզենք միմեկերը մինչեւ քեզի հանդիպիլ ընկերներ ունեցած է: Եւ եթէ դուն նոյն ոգիով շարունակես, յետոյ ալ պիտի ունենայ: «Ահա, այդ տխմարները»: Կամ՝ «ահա, այդ գինովները, հոգիի նրբութիւն չունեցողները, զոտելի սովորութիւններով, բամբաստողները, որ աղջիկներէն վատ են»: Չես գիտեր ինչու երկրորդ

### Կնոջ Տկարութեան Գաղտնիքները

1) Սորվիր օգնութիւն խնդրել: Ատիկա շատ դժուար է եւ անսովոր: Կը թուի, թէ ատկէ ետք դուն ամօթէն գետինը պիտի մտնես, կտոր-կտոր պիտի ըլլաս, մարդիկ ինչ ըսես չեն մտածեր: Պարզապէս խնդրէ մէկէն տանիլ պաշտակար: Կամ ամուսինէդ գումար խնդրէ նոր զգեստի համար, կամ ալ աշխատատեղիէդ՝ հանգստեան օր:

2) Զբաղիր քեզմով: Յիշէ, որ ամենակարեւորը ուժիղ մակար դակն է: Որքան անիկա բարձր է, այնքան քեզի համար դիւրին է կատարել պարտականութիւնները, ըլլալ կին ու թոյլ:

3) Կիսաշրջագգեստ հագիր: Կիսաշրջագգեստով դժուար է ծանր իրեր քաշել, պահարան շարժել, արագ վագել եւ նմանատիպ աշխատանքներ կատարել: Կիսաշրջագգեստով քայլուածքդ ու կեանքիդ ընթացքը կը դանդաղի: Բնական կերպով կ'արթննայ ուշադրութիւն եւ հոգատարութիւն ստանալու ցանկութիւն: Իսկ շրջապատը, յատկապէս տղամարդիկ, շուտ կը հասկնան, որ դուք տղամարդ չէք: Կը սկսին ձեզի համար դռներ բանալ, օգնութիւն կ'առաջարկեն: Երբեմն օգնութիւն ստանալու համար անհրաժեշտ է դադար տալ, տղամարդէն առաջ չանցնիլ

հա գուտար կախելու ժամանակ, այլ մօտենալ կախիչին, կանգ առնել: Ատիկա տեսնելով՝ ան կ'առաջարկէ օգնել վերարկուն հագնելու պահուն: Պայտասկը վերցնելու ընթացքին ալ դա դար տուէք: Ձեր շփոթութիւնը տեսնելով՝ տղամարդը օգնութիւն կ'առաջարկէ եւ այսպէս շարունակ:

4) Սորվեցէք տարբերակել թուլութիւնը գոհ ըլլալէն: Կնոջ թուլութեան մէջ շատ մեծ արժանապատուութիւն կայ: Ատիկա կնոջ դիրքորոշում է, որ գիտէ, թէ արժանի է հոգատարութեան եւ աջակցութեան: Չորս ցած ինքնագնահատականով կանանց դիրքորոշումն է:

5) Երես տուր դուն քեզի: Կրճատէ քեզի հանդէպ քու իսկ դրած պահանջները: Սորվիր վալյել ընթացքը, այլ ոչ թէ վագել արդիւնքի ետեւէն: Այս արդիւնքը պիտի աւելնայ, եթէ սկսիք բարձրացնել ձեր կանացի ուժին մակարդակը: Փորձեցէք կեանքի նոր ձեւը, նոր կենսակերպը: Եւ ո՞վ գիտէ, հաւանաբար ատիկա ձեզի համար հաճելի պիտի ըլլայ: Սկիզբը քիչ մը տարօրինակ կրնայ թուիլ, բայց արժէ փորձել: Կանանց տկարութիւնը տղամարդուն ուժ կու տայ սպաննելու վիշապներ, որսալու մամոնտներ եւ ձեռքերու վրայ տանելու սիրելին:

### Ընտանեկան Կեանքի Ամենաբարդ Ժամանակները

Ընտանեկան յարաբերութիւնները երբեք կատարեալ չեն ըլլար: Հոգեբանները, պայմանականօրէն, ընտանիքին մէջ կ'առանձնացնեն պայթիւնավտանգ ժամանակներու քանի մը փուլ: Հոգեբանի օգնութեան դիմող ամուսնական զոյգերու աւելի քան 80%-ը կը դժգոհի շփման դժուարութիւններէն: Բայց անոնք աւելի կը խորանան համատեղ կեանքի որոշակի ժամանակահատուածներուն:

- Ամուսնութեան առաջին տարին: Վիճակագրութեան համաձայն՝ ընտանիքներու շուրջ կէսը կը քայքայուի համատեղ կեանքի առաջին տարիէն ետք: Նորաթուխ ամուսինները չեն դիմանար կենցաղի փորձութեան: Տարածայնութիւնները կրնան վերաբերիլ պարտականութիւններու բաժանման, իրենց սովորոյթները փոխելու հարցով զուգընկերներու ցանկութեան բացակայութեան: - Ամուսնութենէն 3-5 տարի անց: Յաճախ այդ ժամանակ ընտանիքի մէջ կը յայտնուին երեխաներ, իսկ ամուսինները զբաղած են նոր բնակարանը շտկելով, իրենց մասնագիտական խնդիրներով եւ այլն: Ֆիզիքական եւ ջղախիւ լարուածութիւնը խորթութիւն եւ թիւրըմբռնում կ'առաջացնէ ամուսիններուն մի-

ջեւ: Այդ ընթացքին ռոմանթիկ սիրահարութեան թիւերը կը վերածուի ամուսնական ընկերութեան. ամուսինները արդէն դաշնակիցներ են, այլ ոչ կը քոտ սիրահարներ: - Ամուսնութենէն 7-9 տարի անց: Կրնայ հերթական ձգնաժամը սկսիլ՝ կապուած այնպիսի երեւոյթի հետ, ինչպէս՝ վարժուիլը: Կեանքը քիչ թէ շատ կայունացած է, երեխաները մեծցած են: Յաճախ ամուսինները հիասթափութիւն կը զգան՝ իրականութիւնը համեմատելով քանի մը տարի առաջուան երազանքներուն հետ: Անոնց կը սկսի թուիլ, որ հիմա ամբողջ կեանքի ընթացքին նոյն բանը պիտի ըլլայ. նոր, արտասովոր, թարմ զգացողութիւն կ'ուզեն: - Ամուսնութենէն 16-20 տարի անց: Հնարաւոր է եւս մէկ խուժ: Անիկա կը խորանայ ամուսիններէն մէկուն միջին տարիքի ձգնաժամով: Ի յայտ կու գայ վախցնող զգացողութիւն, որ ամէն ինչի արդէն հասած ես, ամէն ինչ տեղի ունեցած է եւ անձնական, եւ մասնագիտական ոլորտի մէջ: Ընկերաբանները կը նշեն ընտանիքի կեանքին մէջ եւս մէկ ձգնաժամային ժամանակաշրջան, երբ երեխաները կը հեռանան: Ամուսինները կը զրկուին իրենց «լիտաւոր» գործունէութենէն՝ երեխաներու դաստիարակութենէն:

կէսդ անոնց ընտրած է եւ կը կարծէ, թէ անոնք բոլորը կ'աջակցին իրեն: Ի դէպ, քեզի ալ ինք ընտրած է: Այդ մասին մտածէ:

- Անտարբեր մի՛ ըլլար - Ոեւէ մէկը մշտական ինքնագոհաբերութեամբ չի պահանջեր (թէեւ ոտքերու ամէնօրեայ մերսուսը ոչ մէկուն կը խանգարէ), սակայն ակնկալիքներու, սկզբունքներու եւ զուգընկերոջ կարիքներու վրայ կեդրոնանալը այնքան ալ դժուար չէ եւ գրեթէ միշտ օգտակար է:

Իսկ եթէ ժամանակ առ ժամանակ այդ ակնկալիքները, սկզբունքները եւ կարիքները քուկինէդ քիչ մը բարձր դասես, անգնահատելի պիտի ըլլաս:

- Խօսիր - Պարզապէս անհրաժեշտ է որքան հնարաւոր է շատ խօսիլ: Աշխատանքի, գամի եւ փայտի գոյնի, ծրագիրներու եւ յիշողութիւններու, սիրոյ եւ սուրճի տարբեր տեսակներու մասին: Վերջիվերջոյ՝ ալ որո՞ւն հետ պիտի խօսիս:



# ՍԱՐՉԱԿԱՆ

### Իբրահիմովիչ. Ուրախ եմ «Տորոնտոյի» համար. Երանց բախտ վիճակուեց տեսնել իմ 500-րդ կոլը

«Լուս-Անճելոս Գելեքսիի» յարձակուող Ջլատան Իբրահիմովիչը մեկնաբանել է MLS-ի կանոնաւոր առաջնութեան հերթական տուրի՝ «Տորոնտոյի» հետ խաղը (3:5):



Յիշեցնենք՝ շուէտ յարձակուողն այդ խաղում խփել է կարիերայի իր 500-րդ կոլը.

«Ուրախ եմ «Տորոնտոյի» համար: Երանց բախտ վիճակուեց տեսնել իմ 500-րդ կոլը: Կարծում եմ՝ նրանք միշտ կը յիշեն այն:

Դա ինձ յիշեցրեց այն գոլը, որը ես խփել էի դեռ «Ալաբսում»: Նախապէս ոչինչ չէի հաշուարկել, ցանկացա պարզապէս հարուածել: Կարիերայի 500-րդ կոլը ֆանտաստիկ է: Հաւանաբար, ես արդէն աւելի շատ կոլեր եմ խփել, քան այս տղաները խաղերի են մասնակցել», - Իբրահիմովիչի խօսքերն է փոխանցում «FourFourTwo»-ն:

Նշենք՝ գործող միայն 3 ֆուտպոլիստի է յաջողուել հասնել 500 կոլի նշակէտին: Աւելի վաղ այս ցուցանիշը գրանցել են նաեւ յարձակուողներ Կրիշտիանու Ռոնալդուն եւ Լիոնել Մեսսին:

### Եւրա Մովսիսեանը կը խաղայ «Չիկագո Ֆայեր»-ում

Հայաստանի ազգային հաւաքական յարձակուող Եւրա Մովսիսեանը կը շարունակի իր կարիերան «Չիկագո Ֆայեր»-ում: championat.com-ի հաղորդմամբ՝ յայտնել է ակումբի մամուլի ծառայութիւնը:



Աւելի վաղ 31-ամեայ ֆուտպոլիստը խաղում է ամերիկեան մէկ այլ ակումբում՝ «Ռեալ Մոլթ Լէյք»-ում, նաեւ՝ շուէտական «Եւրպորդեն»:

### Բեքիեմը Յանկանում է Մեսսիին Զրաւիրել իր Ակումբ

«Ինտեր Մալմի» սեփականատէր Դեւիդ Բեքեհմը լրջօրէն է տրամադրուած ակումբի կազմը համալրելու գործում:



Անգլիացի նախկին ֆուտպոլիստը ցանկանում է իր թիմ հրաւիրել «Բարսելոնայի» առաջատար Լիոնել Մեսսիին 2020 թուականին: Հենց այդ թուականին էլ պատրաստուած է իր ելոյթները սկսել MLS-ում Բեքեհմի ակումբը, իսկ այդ տարի Մեսսին պայմանագրով նախատեսուած վերջին մրցաշրջանն է անցկացնելու կատարնիայում:

Նշուած է, որ «Ինտեր Մալմի» պատրաստ է արգենտինացու համար մեծ գումարներ առաջարկել, չնայած ֆուտպոլիստի հետ դեռ չեն կապուել:

Մեսսին «կապտանունազույնների» կազմում խաղում է 2003 թուականից:

### Հենրիխ Միխայրեանը Մասնակցեց «Արսենալի» Յաղթանակին

Լոնտոնի «Արսենալը» երրորդ անընդմէջ յաղթանակը տարաւ ֆուտպոլի Անգլիայի պրեմիեր լիգայի առաջնութիւնում:

5-րդ տուրի խաղում լոնդոնցիները հիւրընկալուելիս 2:1 հաշուով առաւելութեան հասան «Նիւքասլի» նկատմամբ: «Արսենալի» կազմում կոլի հեղինակ դարձան Գրանիտ Ջական ու Մեսութ Օզիլը, որը 200-րդ յոբելեանական հանդիպումն անցկացրեց «գինագործների» կազմում: Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Միխայրեանը մասնակցեց հանդիպման վերջին 21 րոպեներին, երբ փոխարինեց յարձակուող Պիեր-Էմերիկ Օբամեյանգին:

Այս յաղթանակից յետոյ «Արսենալը» վաստակեց 9 միաւոր եւ բարձրացաւ 7-րդ հորիզոնական, սակայն թիմը դեռեւս 6 միաւորով հետ է մնում առաջնութեան առաջատարներից՝ «Լիվերպուլից» ու «Չելսիից»:

### Հայ բռնցքամարտիկները Ստամբուլից կը վերադառնան 2 Ոսկէ մետալով



Ստամպուլում անցկացուող բռնցքամարտի միջազգային մրցաշարում Հայաստանի հաւաքականը նուաճել է 3 մետալ: Այդ մասին յայտնում է Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի մամուլի ծառայութիւնը:

52 կգ քաշային Արթուր Յովհաննիսեանը եւ 91 կգ քաշային Նարեկ Մանասեանը եզրափակիչ մրցամարտում յաղթելով իրենց մրցակիցներին, նուաճեցին ոսկէ մետալներ: Իսկ ահա 64 կգ քաշային Յովհաննէս Բաչկովը պարտութիւն էր կրել կիսաեզրափակիչում ու դարձել պրոնոզէ մետալակիր:

### Յովհաննէս Բաչկով. «Յաղթանակս Խայտառակ Կերպով Գողացան»

Թուրքիայի Ստամպուլ քաղաքում ընթացող բռնցքամարտի միջազգային մրցաշարում Հայաստանի ներկայացուցիչ Յովհաննէս Բաչկովին կիսաեզրափակիչում պարտութիւն էր գրանցուել: Հայ բռնցքամարտիկը բաւարարուել էր պրոնոզէ մետալով: Բաչկովը նշել է, որ յաղթանակն իրենից մրցավարները գողացել են եւ որ ինքը բարձր է պահել Հայաստանի պատիւը:

«Սիրելի բռնցքամարտի եւ սպորտի սիրահարներ՝ Թուրքիայում կայացած մրցաշարում ես Հայաստանի պատիւը բարձր եմ պահել ու չեմ զիջել ոչ մի ուռուեղ: Յաղթանակս խայտառակ կերպով գողացան իրենց վայել կերպով: Յետոյ մրցավարները ներողութիւն էին խնդրում՝ մենամարտս անարդար դատելու համար: Բոլոր մարզիկներն ու մարզիչները, թուրքերը, նոյնիսկ հակառակորդս, խօսում էին մենամարտի անարդարութեան մասին:

Հակառակորդս ասում էր, որ մեծ պատիւ է ինձ հետ մենամարտելը, նա ասաց՝ մեղաւոր չէ, որ յաղթանակն իրեն տուեցին: Մեծ քայլ էր մարզիկի կողմից: Գոյութիւն ունի մարտ գողանալու չափ ու սահման: Հաւատացնում եմ, որ ես այս մրցաշարում կարող էի յաղթող դառնալ 99 տոկոսով», - ֆէյսպուքեան իր էջում գրել է Բաչկովը:

### Հայ Մարզուհին Յաղթել է Հայ Սպային Կացնահարած Ռամիլ Սաֆարովի Քրոջը

Հայաստանի պրոֆեսիոնալ Արմ-Ֆայթինգ ֆեդերացիայի մարզուհի Կարինէ Կարապետեանը վրաստանի մայրաքաղաք Քեբիլիսիւում ընթացող MMA-ի միջազգային մրցաշարում յաղթել է ատրպէյճանցի մարզիկ Ռենա Սաֆարովին, ով հայ սպայ Գուրգէն Մարգարեանին կացնահարած Ռամիլ Սաֆարովի քոյրն է:



«Յաղթանակս նուերում եմ հայ սպայ Գուրգէն Մարգարեանի յիշատակին», - գրել է Կարինէ Կարապետեանը ֆէյսպուքի իր էջում:

### Էդգար Ստեփանեանը կը Մասնակցի Աշխարհի Գաւաթի Խաղարկութեանը

Հոկտեմբերի 19-ին Ֆրանսայում կը մեկնարկի հեծանիւային սպորտի աշխարհի գաւաթի խաղարկութեան առաջին փուլի մրցաշարը: Հանդէս կը գան միայն վարկանիշ նուաճած մարզիկները: Նման պատուի է արժանացել էդգար Ստեփանեանը, ով էլ ստուգատեսում կը ներկայացնի Հայաստանը:



Վաստակաւոր մարզիչ Արմէն Գիողալեանի սանը գաւաթային ստուգատեսին մասնակցելու ուղեգիր է ձեռք բերել Աստանայում օրերս անցկացուած միջազգային բարձրագոյն կարգի մրցաշարում: Հայ հեծանաւորըը երկրորդն էր օմնիում մրցաձեւում, իսկ դրան յաջորդած սկրեչում գրաւել էր առաջին տեղը:

Յիշեցնենք, որ 21-ամեայ էդգար Ստեփանեանը Օգոստոսին նուաճել էր Եւրոպայի մինչեւ 23 տարեկան հեծանուորդների ախոյեանի կոչումը:



# Անդրանիկի Դիմում-Կտակն իր Զինուորներին Յարգանքի Համար



**Զինուորներուս,**  
 Երբ թուղթերուս ծրարները կը քրքրէի, Կովկասեան ճակատին վրայ ձեր կատարած գործերուն համեստ օրագրութեան հանդիպեցայ, ձեր ընկեր գինուորներէն մէկուն կողմէ նօթագրուած: Կարօտցած բարեկամի մը եւ սիրական դէմքի մը նման ողջագրութեան գայն, համբուրեցի ձեզ՝ համբուրելու անուշ զգացումն ունենալով: Ձեր ընկերը, իր համեստ կարողութեամբ նօթագրած չէր եւ ոչ ալ պատմած էր ձեր կրած շարժարանքները, գրկանքները եւ նեղութիւնները, այլ մեկ երկու տողերով օրուան անցքերը եւ մեծ կռիւներուն պատմութիւնները ըրած էր «օր մը մի գուցէ այդ գոհաբերումները պէտքի մը ծառայեն»

Սիրելի գինուորներս,  
 Հիմա, որ ձեր կատարած գործերուն շատ համեստ կերպով նկարագրուած պատմութիւնը մամուլին կը յանձնեմ, չեմ կրնար չարգանքի եւ հիացումի երկու խօսք չըսել ձեր անունին, երբ կը մտաբերեմ ձեր կատարած գոհաբերումներն ու յաղթանակները:

Վերջին տխուր դէպքերուն առջեւ երբ կը կարմրինք ու երբ օտարներ կը փորձեն անուանարկել Հայ գինուորին արժանապատուութիւնը, դուք ձեր քաջութեամբ, ձեր պատմութեամբ եւ գործերով անոնց աչքերուն առջեւ կը ցցուիք, արհամարելով զանոնք, բարձր բռնելով Հայ գինուորին եւ Հայ ցեղին արժանապատուութիւնը: Դուք գիտցաք կռուիլ անոր համար, որ դուք կը հասկնայիք ԿՌՈՒԻՆ ԱՐԺԵՔԸ, դուք կրցաք պարտութեան մատնել

թշնամին եւ հիացում հրաւիրել ձեր վրայ, անոր համար, որ ԳԻՏԷ-ԻՔ ՆՈՒԻՐՈՒՄ ԵՒ ԳԻՏԷՒՔ ԾԱՌԱՅԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՈՒ ԱՆՈՐ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ:

Երեսուն տարիներէ ի վեր Հայ գինուորը բարձր բռնեց իր անունը եւ պատիւը: Սասունէն սկսեալ մինչեւ Պալքանեան պատերազմը եւ անկէ մինչեւ Զանգեզուր, Սիսեան, Խաբան ու Զապուխ Հէքէրու գետերը Կովկասի ճակատին վրայ ձեր մարտնչումները աշխարհ հիացուցին: Ֆէրիք, Ալի, Եւփէր, Ալի Իսսան, Խէլի, Վէհիպ եւ Նուրի փաշաները եւ անոնց ամենալեալին գիւղերներն իսկ տեսան ու ճաշակեցին ձեր մարտնչումները...: Անոնք ճանչցան ձեր ուժն ու սիրտը եւ վարանեցան ձեր առջեւ, բայց ձեր հարազատ ցեղին մեկ մասը չճանցաւ... ու չչարգեց ձեզ...:

Ինչ բան էր, որ մղեց ձեզ թողուլ ձեր տունները, ձեր գործերը եւ հանգիստը, երիտասարդ կեանքի վայելքներուն հետ եւ գալ պատերազմի դաշտ շալկելու ձեր հրացանն ու առերկիր: Ես կը զգայի եւ կը հասկնայի ձեր գոհաբերումներուն արժանիքը եւ իմաստը: Ես գիտէի, թէ որքան ծանր էր ձեր վրայ ճնշող պատասխանատուութիւնն ու պարտականութիւնը:

Մեծ համբերութեամբ կրեցիք ձեր շարժարանքները եւ մեծ հաւատքով տարիք ձեզի յանձնուած գործը: Ես չլսեցի տրտունջի ոչ մէկ բառ, ցաւի ոչ մէկ արտայայտութիւն: Մերկ էիք, անօթի մնացիք օրերով, ձմրան ցուրտը, փուքն ու քամին, ձիւնն ու անձրեւը, կարկուտին հետ ծեծեցին ձեզ, բայց

դուք արհամարեցիք զանոնք թշնամիին գնդակներուն հետ: Ձեր այս կեցուածքը քաջալերեց զիս, ուրախացուց սիրտս եւ մենք կրցինք շահիլ փառաւոր յաղթանակներ ՀԱՅ ԱՆՈՒՆԻՆ ՀԱՄԱՐ: 6000 վերստ ճամբայ կտրեցիք Կովկասի ճակատին վրայ խոչնդոտներու եւ դժուարութեանց կուրծք տալով: Դուք ՀԱՊՏԵՐՆԵՐՆ ԷՒՔ Ռուս բանակին, դուք առաջնորդները Ռուս գինուորի շաղկին: Օտարը հիացաւ ձեր վրայ, ՀԻԱՅԱԿ ձեր Հրամանատարն ալ բերկրեցաւ ձեզ համար, վստահ ձեր Հայու հօր բազուկներուն նոր յաղթանակներու դիմեց:

Ի՞նչ վսեմ սէր ու մաքուր զգացում էր, որ ունէիք դուք ձեր կրծքերուն տակ: Ես բոլոր դժուարութիւններուն մէջ ձեր դէմքերուն վրայ հրճուանք կը տեսնէի, երբ ասկէ ու անկէ Հայ մանուկներ եւ Հայ գաղթականներ հաւաքելով ինծի կը բերէիք: Դուք ձեր հացը, ձեր հագուստը եւ հանգիստը կը տրամադրէիք անոնց երջանկութեան, անոնց բարօրութեան եւ հանգստին համար:

Ռուս պետութիւնը ձեր կուրծ-

քերը ոսկի եւ արծաթ խաչերով եւ մետաղներով պսակեց: Այդ խաչերը եւ այդ մէտաղները օտար գինուորականներու գովեստին հետ ձեր սրտերը հրճուանքով չլեցուցին այնքան, որքան հրացանը ձեռքերնիդ թշնամիին դիմաց վրէժով վրէժով եւ արիւնը արիւնով կը մաքրէիք... Թշնամիին անկողմը ձեր հրճուանքն էր եւ Հայու մը ազատագրումը ձեր ժպիտը:

Ինկան ձեզմէ շատերը: Անոնց աճիւնները խառնուեցան մայր հողին: Խոնկով ու աղօթքով օրհնուած ու սրբացած գիր մը չդրին անոնց վրայ, աղօթք եւ սաղմոս չկարդացին, այլ միայն հովը սուրբ փայփայելով անոնց սեւ ու սիրուն վարսերը:

Սիրելի Զինուորներս,  
 Սա մէկ քանի տողերս իբր յարգանքի եւ գնահատանքի նշան ձեզի կը թողում իբր կտակ եւ սրտածօն ապրողներուդ եւ իբր տապանաքար անթաղ եւ անշիրիմ գինուորներուս...

Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ  
 1924, Յունիս 18 - Ֆրէզնօ

## Ուշագրաւ Համերգներ

Շարունակուած էջ 13-էն

Այս համերգով նաեւ նշանաւորուած է Շանհայի երաժշտական կոնսերվատորիայի եւ ՀԲԸՄ միջեւ բեղմնաւոր համագործակցութեան շարունակութիւնը, որը մեկնարկել է 2015թ., երբ կոնսերվատորիայի ուսանողները կազմակերպեցին աւանդական հայկական երգի կատարումը Քարնեգի համերգասրահում (NYSEC) ՀԲԸՄ արուեստագետ-կատարողների 8-րդ համերգի ժամանակ:

Շրջագայութիւնը շարունակուեց «Արեւելքի եւ Արեւմուտքի երաժշտութիւնը» խորագրով համերգով, որը տեղի ունեցաւ Յունիսի 1-ին ծափոնիայի մայրաքաղաք Տոկիոյի Յունոհագու Կոմիտի սրահում: Համերգը կազմակերպուել էր ՀԲԸՄ եւ Arev Arts անսամբլի եւ հիմնադրամի կողմից, եւ այն ծափոնիայում Հայաստանի դեսպանութեան կողմից Տոկիոյում պարբերաբար անցկացուող հայկական մշակութի շաբաթուայ մաս էր կազմում: Այս մշակութային միջոցառումը հայկական ժառանգութեանը հայեցք ձգելու հնարաւորութիւն ընձեռեց ծափոնիայի լսարանին. մի երկիր, ուր հայերը պատմականորեն զգալի ներկայացուածութիւն չեն ունեցել, եւ միայն վերջերս է փոքրիկ համայնք ձեւաւորուել: «Վերջին մի քանի տարիներին ծափոնիայում Հայաստանի դեսպանութիւնը Տոկիոյում հայկական մշակութի շաբաթներ է կազմակերպում: Հայաստանը եւ սփիւռքը ներկայացնող արուեստագէտները, երաժիշտներն ու արհեստագործները, ինչպէս նաեւ Հայաստանի ճափոնացի բարեկամները ցուցադրում են իրենց արուեստն ու կատարում մշակութիւնների կամրջի դեր՝ նշանաւորելով երկու երկրների միջեւ բարեկա-

մական կապերը: Մենք ուրախ ենք, որ այս տարի ՀԲԸՄ կատարողական արուեստների բաժինը մեր կարեւոր գործընկերն էր», - նշեց ծափոնիայում Հայաստանի դեսպան Հրանտ Պողոսեանը: Նա շարունակեց՝ նշելով, որ ի շնորհիւ փայլուն կատարումների ու դասախօսութիւնների, տեղացիները հնարաւորութիւն ունեցան աւելի լաւ ընկալելու հայկական մշակութիւնը:

Երեկոյին մասնակցեցին հանրայայտ երաժիշտներ Հայաստանից, ծափոնիայից, Սպանիայից եւ Միացեալ Նահանգներից, ովքեր նուազեցին դաշնամուր, ջութակ եւ կոտո (ճափոնիայի քնար) ձայնով եւ, որ ՀԲԸՄ կատարողական արուեստի բաժնի հետ մեր համագործակցութիւնը կը շարունակուի եւ հայկական մշակութիւնը ծափոնիայում ներկայացնելու աւելի շատ հնարաւորութիւններ կ'ընձեռի», - ասաց Arev Arts անսամբլի եւ հիմնադրամի տնօրէն եւ հիմնադիր Կարէն Իսրայէլեանը:

Համերգներին յաջորդեցին Արսենեանի դասախօսութիւնները, նախ՝ Հոնգ Կոնգի Համալսարանում, ապա՝ Տոկիոյի Waseda Համալսարանում, որը մեծութեամբ երկրորդ համալսարանն է ծափոնիայում: Նա անդրադաւ հայկական պատմութեանը, մշակութիւնը, երաժշտութեանը եւ ՀԲԸՄ տարբեր ծրագրերին, այդ թւում՝ ՀԲԸՄ երաժշտական Հայաստանի ծրագրերին: Ծափոնացի դուդուկահար Յաս Տարուսին միացաւ Արսենեանին՝ Waseda համալսարանում կատարելով աւանդական եւ դասական հայկական երաժշտութիւն: «Սա մեր երաժշտութիւնն ու մշակութիւնը Ասիայի ժողովրդին ներկայացնելու հիանալի հնարաւորութիւն էր՝ մեր ժողովրդական մեղեդիների իւրօրինակ մեկնաբանութիւններով», - եզրափակեց Արսենեանը:

**ԾԱԽՈՒ Է**  
 Ծախու է Լիբանանահայ մտաւորական «Նայիրի» անսագրի երբեմնի ակաճաւոր խմբագիր՝ Անդրանիկ Ծառուկեանի «Նայիրի» անսագրերի 1958-1975 տարիներու լաթակազմ հաւաքածոները:  
 Հետաքրքրուողներն կը խնդրուի հեռաձայնել՝ Վահէ Աջապահեանի (626) 354-5924:


**AMAA Centennial Banquet**  
 Los Angeles – October 20, 6 pm , AMAA Centennial Banquet at Biltmore Hotel will honor Benefactors Stephen Philibosian and Conte Foundations, Sheen Family Trust, Gerald and Patricia Turpanjian, TF Educational Foundation. Kenneth Khachigian, Master of Ceremonies . For more information call Levon Filian 626.487.5878 or the AMAA Office 201.265.2607 or e-mail mpoulos@amaa.org

**Զօրացիւք Օժանդակէ՛ք Փրկէ՛ք**  
  
 SYRIAN ARMENIAN RELIEF FUND  
 www.syrianarmenianreliefund.org  
 Syrian Armenian Relief Fund  
 P. O. Box 1948  
 Glendale, CA 91209-1948  






**SPONSORS**



# ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ

## Փառատոն

### SUNDAY SEPTEMBER 23, 2018

VERDUGO PARK GLENDALE

1621 Canada Blvd., Glendale, CA, 91206

Starting at 11:00 am

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

Live Music & Dancing

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ

Art Work Exhibition

ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ ԵՒ

ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ

Kids Games

ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ

Armenian Food

ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

GENERAL SPONSOR

INNOVATIVE

Designs



Manufacturing, Inc.

By TED & NORA KOROGHLIAN

To reserve your vendor booth please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար

Հեռաձայնեցեք

Նոր Սերունդ Մշակութային Միութեան

(818) 391-7938